

6(580)

5.03.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և զխրատը, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Lycapap

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՌԱՆՁԱՆԱՆԵ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՀԱՄԵՐԱՆՎԵՐՈՒԹՅԱՄԲ

Այս տարվա գարունը Արցախում կմեկնարկի նախընտրական բարձր տրամադրությամբ, թեպետ եթե ճիշտն ասենք՝ բնավ էլ գարնան գործը չէ, թե մեր չնաշխարհիկ հայրենիքում քաղաքական ինչ կարևոր իրադարձություններ են տեղի ունենում: Գարունն իր իրավունքների մեջ կմտնի բնականոն օրինաչափությամբ, և մենք, ծիլ ու ծաղկի արթնությամբ ոգևորված, անշուշտ, կողջունենք գարնան գալուստը: Բնությունը նոր կյանք կառնի՝ հուզմունքից լացացնելով սարերի ձյուններին, ու զվարթ կխտխտեցնի լեռնային գետակները...

Թերթի խմբագրականին ոչ բնորոշ այս նախաբանը թող որ լավ զգացողություններ հաղորդի ամենքիս, հատկապես որ շուրջ մեկ ամսվա ընթացքում տոգորված ենք լինելու նախընտրական հույսերով: Այլ կերպ հնարավոր էլ չէ. առաջին անգամ Արցախում տեղի են ունենում նախագահական և խորհրդարանական համաժամանակյա ընտրություններ, որոնց հետ մեզանից յուրաքանչյուրն առանձին հույսեր է կապում: Այդ ընթացքում մենք պարտավոր ենք քաղաքացիական առավել ակտիվություն ցուցաբերել, հարգալից լինել և ուշադիր լսել հայտ ներկայացրած թեկնածուներին ու քաղաքական ուժերին, խորամուկ լինել նրանց առաջարկված ծրագրերի մեջ: Մեծ հաշվով նրանցից յուրաքանչյուրն Արցախի անվտանգության ու բարգավաճման սեփական տեսլականն ունի, որոնց անհատական ընկալումը մեզ համար թերևս ժամանակավոր «ճանաչարներ» է ստեղծելու, և ակամայից դառնալու ենք առաջարկված որևէ գաղափարի սոսկական կրողը: Հնարավոր է խուսափել երևույթի ծայրահեղացումից... Այո, եթե ածանցյալ չդառնանք նախընտրական բազմախոստումներին, զնահատենք ոչ թե խոստումները, այլ ծրագրերը, որոնցով է իմաստավորվելու առնվազն առաջիկա հնգամյակը:

Եվ ամենակարևորը՝ հանդուրժողական լինենք թեկնածուների հանդեպ: Չընդունել անձի գաղափարական ինքնությունը՝ չի նշանակում հակառակորդ դառնալ տվյալ անձին: Հիշենք, որ նրանք երեկվա, այսօրվա ու վաղվա մեր անփոփոխ հարևանն են, բարեկամը, հավատակիցը, և ոչինչ էլ չի փոխվել նախընտրական այս շրջանում: Նրանք կան ու մնացել են նույնը՝ պատերազմի խրամատում ուսնկից զինվորը, աշխատանքի վայրում՝ լծակից գործընկերը, կրթարաններում՝ նստարանի զուգընկերը... Վաղ էլ նույնն են լինելու, անկախ նրանից, թե ինչ արդյունքներ է հրամցնելու Ընտրություններ-2020-ը:

Մանկավարժները մտավորականության հարարժևորված հատվածն են, որոնց անձնական վարքագիծը ուսանելի է ոչ միայն սովորողների համար: Վստահ ենք, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում և ընտրության օրը կառանձնանանք մեր ընդհանուր կարգապահությամբ ու համերաշխությամբ:

Հաջողություններ ենք մաղթում ընտրապայքարում ընդգրկված մեր բոլոր հայրենակիցներին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Հովհաննես Շիրվազ

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս, ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ, ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս, ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք, - Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայրերին Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ծյունաթույր, Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաթույր:

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

- Ի՞նչ թարմություն,- ասացին,- ի՞նչ թարմություն, - ու բացին Լուսամուտներն իմ առջև, ու ես իմ սիրտը բացել՝ Անցնում էի երգելով ու շաղ տալով մայրերին Մանուշակներ ու վարդեր ու հասնիկներ հոգեթով, Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել, Քաղաք իջել լեռներից՝ կանցներ գմբուխտ հեքիաթով Երկրե-երկիր շաղ տալով կակաչներն իր ձեռքերի, Մեր երգերի լուսաբացն ու գարունը լեռների:

ԱՆ ԿՐԹ ՆԱԽԱՐԱՐ ՆԱՐԻՆԵ ԱՐԱԲԱՆՅԱՆ ԱՄՓՈՓԵՅՑ ԱՐԻՆ



Փետրվարի 27-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Արաբյանը հրավիրել է մամուլի ասուլիս, որտեղ ներկայացրել է 2019թ. կատարված աշխատանքները, 2020թ. նախատեսված ծրագրերը:

Նախարարի տեղեկատվությանը՝ ընդհանուր առմամբ հաշվետու տարում աշխատանքներն ուղղված են եղել կրթության, գիտության և սպորտի ոլորտներում հիմնախնդիրների լուծման և զարգացման ծրագրերի իրականացմանը:

Նախադպրոցական կրթության ոլորտում աշխատանքներն ուղղված են եղել ցամաքի ընդլայնմանն ու նախադպրոցական կրթության որակի բարձրացմանը: Նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովման նպատակով շահագործման է հանձնվել մեկ նոր մանկապարտեզ Ասկերանի շրջանի Շոշ համայնքում, որը կառուցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով: Նաև 6 նոր նախադպրոցական խմբեր են բացվել Շուշիի շրջանի Հիմ շեն և Քաշաթաղի շրջանի Սոնասար, Այգեհովիտ և Իշխանաձոր համայնքների դպրոցներում: Ստեփանակերտում նախադպրոցական կրթության հնարավորություններն ընդլայնելու նպատակով հ. 8 դպրոցում ավելացել է մեկ խումբ (մանկապարտեզային պայմաններով), իսկ հ. 4 դպրոցում գործող խումբը և հ. 6 դպրոցի խմբերից մեկը վերափոխվել ու անցել են մանկապարտեզային (9-ժամյա) ռեժիմով գործունեության: Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի մանկապարտեզում ավելացել է մեկ խումբ: Ընդհանուր առմամբ նախադպրոցական կրթությունը 2019թ. հասանելի է դարձել շուրջ 250 նոր երեխաների համար: Առաջիկա օրերին շահագործման կհանձնվի նաև Աստղաշենի նորակառուցված մանկապարտեզը: Կսկսեն գործել Թալիշի մանկապարտեզը, առաջիկա

ամիսներին՝ Ստեփանակերտում, Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում կառուցված նոր մանկապարտեզները: Նախադպրոցական կրթության պայմաններ են ստեղծվել մայրաքաղաքի Աջափնյակի դպրոցում: Տարվա ընթացքում նախադպրոցական կրթությունը հասանելի կլինի ևս 500 երեխայի: Կարևորվել են նաև մանկապարտեզների և նախադպրոցական խմբերի գործունեության վերահսկողությունն ու մեթոդական աջակցությունը: Կազմակերպվել և առաջիկայում էլ նախատեսված են վերապատրաստման դասընթացներ նախադպրոցական խմբերի աշխատողների համար: Աշխատանքներ են կատարվել ոլորտում նոր ներդրումների խթանման ուղղությամբ:

Հանրակրթության ոլորտում նախարարության աշխատանքներն ուղղված են եղել կրթության մոդերնիզացիայի սահմանմանը, կրթական մոդերնիզացիայի ներդրմանը: Կրթության ոլորտի խնդիրների շուրջ հանրային և փորձագիտական ընկերությունների հարթակի ստեղծման, ԱՀ-ում կրթության մոդերնիզացիայի նպատակներ և ռազմավարական ծրագրի մշակման ու իրագործման նպատակով իր ձևաչափով և բովանդակությամբ աննախադեպ էր «Արցախի կրթական ֆորումը», որին մասնակցել են կամավորության սկզբունքով հայտագրված շուրջ 150 մանկավարժներ՝ տնօրեններ, ոլորտի պատասխանատուներ: Նախարարը փաստեց, որ գրավոր հարցախույզի արդյունքներով մասնակիցների 45%-ը ֆորումը գնահատել է որպես շատ արդյունավետ, իսկ 50%-ը՝ արդյունավետ: Ֆորումի արդյունքում 12%-ի մոտ էականորեն փոխվել են կրթության խնդիրների նկատմամբ պատկերացումները: 33%-ի մոտ ընդհանուր առմամբ են փոխվել և որոշ չափով փոխվել են 39%-ի մոտ: «Սա կարևոր է այն առումով, որ եթե մենք ցանկանում ենք բարեփոխումներ իրականացնել կրթության ոլորտում, նախ պետք է հստակ պատկերացում ունենանք այդ խնդիրների մասին: Ընդ որում, այդ պատկերացումը չի վերաբերում միայն լիազոր մարմնին կամ ոլորտի պատասխանատուներին, դա վերաբերում է նաև գործընթացի բոլոր մասնակիցներին և ընդհանրապես հանրությանը», - ասաց Ն. Արաբյանը:

Ֆորումը ևս մեկ անգամ հաստատեց, որ անելիքներ կան կրթության հիմնախնդիրների հստակեցման ուղղությամբ: Նախարարը տեղեկացրեց, որ ֆորումի ընթաց-

քում հավաքված նյութերը մասնագետների կողմից ուսումնասիրման և մշակման փուլում են՝ որպես հիմք ոլորտի հետագա քաղաքականության մշակման:

Ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության առումով նախարարն առանձնացրեց նաև մանկավարժական որակավորման դասընթացը «Թեստային ձևերի կիրառումը նոր կրթական և ստեստավորման տեխնոլոգիաներում» խորագրով, որը վարում էր ծնունդով արցախցի՝ ռուսաստանաբնակ հայտնի թեստաբան, պրոֆեսոր Վաղին Ավանեսովը, ինչի արդյունքում ուսուցիչները ստեղծել են մի քանի տասնյակ ուսումնական տեքստեր ու առաջադրանքներ, որոնք կարելի է ներդնել դպրոցներում: Դա այսօր կրթության արդիականացման հիմնական ուղղություններից մեկն է, որը հաստատվել է կիրառում է գտել համաշխարհային մանկավարժական արևմտիկայում: Աշխատանքները հաջողությամբ շարունակվելու դեպքում այդպիսի ընկալելի տեքստեր կստեղծվեն յուրաքանչյուր առարկայի դասավանդման համար, ինչը էականորեն կբարեփոխի մեր կրթության բովանդակությունը, կբարձրացնի ուսուցիչների պատրաստվածության մակարդակը, և կհաջողվի հասնել կրթության որակական փոփոխության, համոզված է նախարարը:

Այս համատեքստում արժեքներ են նաև Երևանի «Զվանտ» վարժարանի և ԱրՊՀ-ի հետ համագործակցությամբ հանրապետության տարբեր շրջանների ֆիզիկայի ուսուցիչների 5-օրյա վերապատրաստման դասընթացը, սովորողների մոտ բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրությունը խթանելու նպատակով մոսկվաբնակ մեր հայրենակիցների նախածեռնությամբ կրթաթոշակ սահմանվելը ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաներից լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտների համար: Նախարարությունը 2020-ը հայտարարել է ֆիզիկայի տարի, և մի շարք միջոցառումներ ու ծրագրեր են նախատեսված: Հայաստանի և Արցախի «Young Minds» կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվել է հետաքրքրաշարժ ֆիզիկա ծրագիրը: Ֆիզիկայից օլիմպիադաներ և ինտելեկտուալ խաղեր են կազմակերպվել մշակված կազմակերպությունների և Արցախի պետական համալսարանի հետ: «Բնագիտական առարկաների դասավանդման խնդիրը շարունակում է մնալ

մեր հիմնական թիրախներից մեկը, և մեր կողմից հայտարարված «Ֆիզիկայի տարի» ծրագրի շրջանակներում նախատեսված են տարբեր միջոցառումներ ու նպատակային ծրագրեր, որոնք, հուսով ենք, կնպաստեն այս հիմնախնդրի լուծմանը», - ասաց Ն. Արաբյանը՝ հավելելով, որ աշխատանքներ են իրականացվում նաև բնագիտական խմբակներ բացելու ուղղությամբ, ինչը նպատակ ունի խթանել գիտության հետ հաղորդակցությունը դպրոցական տարիքից, որն էլ իր հերթին կնպաստի երեխաների ուղղորդմանը դեպի գիտություն:

Նախարարությունը համագործակցության ծրագրեր է սկսել ՀՀ դպրոցների հետ, մասնավորապես «Այբ» կրթական հիմնադրամի հետ աշխատանքներ է իրականացնում Արցախում «Քան» ակադեմիայի ստեղծման ուղղությամբ, ինչը կղծված է ապահովելու առցանց որակյալ կրթություն բոլորի և յուրաքանչյուրի համար: Ծրագիրը կմեկնարկի Քաշաթաղի շրջանից, քանի որ այստեղ են հիմնականում ուսուցիչ թափուր տեղերը, և թերևս հաջողվի այդ բացը լրացնել առցանց կրթության միջոցով:

Նախարարի կարծիքով ընդհանրապես թափուր տեղերը չեն համարվում հիմնականում գյուղերի փոքր դպրոցներում, և այս խնդիրը համալիր լուծում է պահանջում: Լուծումներից մեկը տեսնում է համայնքի կյանքում դպրոցի դերի բարձրացումով: Որպեսզի դպրոցը իսկապես դառնա գյուղի զարգացման հիմքը և նպաստի համայնքի զարգացմանը, պետք է համապատասխան աշխատանք իրականացնել և ակտիվորեն մասնակցի համայնքի զարգացման ծրագրերին: Առաջիկայում այդպիսի ծրագրեր են նախատեսվում մի շարք փոքր գյուղերի համար, մասնավորապես՝ Ասկերանի շրջանի Ազնեքի, Խնածախի դպրոցների համար, տեղեկացրեց Ն. Արաբյանը: Օրինակ՝ Ազնեքի դպրոցը, որը, ի դեպ, վերջին տարիներին օլիմպիադայի արդյունքներով միշտ հայտարարվել է որպես լավագույն արդյունքներ ցուցաբերած դպրոց, փաստացի փակման եզրին է, քանի որ այնտեղ ընդամենը մեկ տասնյակ աշակերտ է սովորում, և ներքևից նվազում է: Կոլեկտիվի հետ հանդիպման ժամանակ ծրագրվել են հետագա անելիքները, որոնք պետք է նպաստեն համայնքի զարգացմանն ու դպրոցի կենսունակության ապահովմանը:

ԱՄՈՒԼԻՍ

ԱՆ ԿԳՍ ՆԱԽԱՐԱՐ ՆԱՐԻՆԵ ԱՂԱԲԱՆՅԱՆՆ ԱՄՓՈՓԵՅՑ ՏԱՐԻՆ

1 Մասնավորապես նախատեսվում է ամառվա ընթացքում այնտեղ կազմակերպել ամառային դպրոց-ճամբար, որտեղ սովորելու հնարավորություն կունենան նաև այլ շրջաններից աշակերտներ:

Այս նպատակով նախարարությունն իրականացնում է նաև դրամաշնորհային ծրագրեր: Այսպես՝ «Ես» կրթական հիմնադրամի հետ իրականացրել է դրամաշնորհային ծրագիր Մարտունու շրջանի Զաղորտի, Մուշկապատ, Խնուշինակ, Սպիտակաշեն գյուղերի դպրոցականների համար: Արդյունքները գուհացուցիչ են. դպրոցները սկսել են ակտիվորեն մասնակցել համայնքի զարգացման ծրագրին. սա նաև խթանել է երեխաների նախաձեռնողականությանն ու վերլուծական մտածողության զարգացմանը: Նրանք այս ծրագրի շրջանակներում ծանոթանում են նոր տեխնոլոգիաներին, ստանում նախնական տեխնոլոգիական կրթություն: Դրամաշնորհային մեկ այլ ծրագիր մեկնարկել է «Հայկական կինոյի ինդուստրիալ զարգացում» մշակութային հիմնադրամի հետ համագործակցությամբ նորարարական կինոդպրոցի ստեղծման ուղղությամբ, և այդ ծրագրով ակնկալվում է երեխաներին սովորեցնել կինոարվեստի արդիական ծրագրեր:

Տեխնոլոգիական զարգացման ծրագրի շրջանակներում շարունակվում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրումը: 2019-ին 5 լաբորատորիա է ներդրվել Շուշիի շրջանի Գին շենի, Քարին տակի, Մարտունու շրջանի Խնուշինակի, ճարտարի հ. 1, Զաղորտի շրջանի Մեծ Թաղերի դպրոցներում, ընդ որում վերջին 4-ը՝ «Հայ կրթական հիմնադրամի» միջոցներով: Մի շարք դպրոցներ բարեգործական խողովակներով համալրվել են համակարգչային տեխնիկայով և այլ գույքով: Հանրապետության երեք տասնյակից ավելի համայնքներից դպրոցականները մեքենաներով տեղափոխվում են Ստեփանակերտ և սովորում «Թունու» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում: Ավելացել է «Թունու» ծրագրի շահառուների թիվը՝ ներառելով Խնուշինակ, Առաջաձոր, Զաղորտ համայնքների դպրոցականներին:

Ուշադրության կենտրոնում են եղել հանրահանրու ներառական կրթության խնդիրները: Հանրապետության մի շարք դպրոցներում ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ մասնագիտական խմբի աշխատանքների համար, ինչպես նաև ձեռք են բերվել դիպլոմային նյութեր ու պարագաներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար: ԳԹԿ-ի կրթական կարիքի գնահատման բաժնի կողմից գնահատվել են 200-ից ավել երեխաներ: Իրականացվել է մանկավարժաժողովների և մասնագետների դրամաշնորհային ծրագիր «Ելարան» ԳԿ-ի միջոցով: Նախարարը կարևորում է այս ծրագիրը, քանի որ գործընթացին ներգրավել են և՛ մասնագետներին, և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներին, ինչը նպաստում է այդ խնդիրների ճիշտ վերահամանրել և ճիշտ լուծումներ գտնելուն: Այս ոլորտում առաջիկայում սկսելու են նոր ծրագիր: Վերապատրաստման դասընթացներ են իրականացնելու մասնագետների, հոգեբանների, հատուկ մանկավարժների, սոցիալական կրթության համար, և դպրոցները համալրվելու են մասնագետներով: Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հետ պայմանավորվածությամբ է ձեռք բերվել այս ուղղությամբ առաջիկայում դասընթաց կազմակերպելու: Պիլոտային ծրագիր կիրականացվի մինչև ուսումնական տարվա վերջը, իսկ սեպտեմբերից արդեն համապատասխան հաստիքներ կներդրվեն այն դպրոցներում, որտեղ դրանք բացակայում են, տեղեկացրեց նախարարը՝ հավելելով, որ միայն մասնագետներ ներդրելով այս խնդիրը չեն կարող լուծել, պետք է

շարունակել աշխատանքն ուսուցիչների հետ և մանկավարժական կրթության մեջ պետք է համապատասխան փոփոխություն կատարել: Երևանի գործընկերների հետ նախարարի առաջիկա հանդիպման ժամանակ կքննարկվի այս խնդիրը:

Կրթության պետական տեսչության կողմից համակողմանի տեսչականում են ենթարկվել 35 կրթական հաստատություններ, այդ թվում միջնակարգ դպրոցներ՝ 21, հիմնական դպրոցներ՝ 8, մասնաճյուղեր՝ 6, հանրապետության մի շարք դպրոցներում իրականացվել են թեմատիկ առարկայական ստուգումներ և մեթոդական օգնության կազմակերպում, Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում նաև ստուգայցեր:



Հանրակրթության ոլորտում կարևորագույն նորություններից էր ուսուցիչների աշխատավարձերի բարձրացումը 10%-ով: Չնայած էական փոփոխություն չէ, բայց կարևոր է դրական միտումը: Ներկայումս ֆինանսների նախարարության հետ համատեղ քննարկվում է կրթության համակարգի մյուս օղակների աշխատավարձերի բարձրացման հարցը:

Նախարարության կողմից կազմակերպվել են դպրոցականների և ուսանողների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ ԱԳ-ում և ԳԳ-ում կազմակերպված ճամբարներին մասնակցել է շուրջ 2000 աշակերտ: Սա նույնպես շարունակական է լինելու, հատկապես փոքր գյուղերում փորձելու են կյանքն աշխուժացնել նաև ամառային ճամբարների միջոցով, ինչը որոշակի դրական ազդեցություն կունենա համայնքների կյանքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում հիշարժան է Բերձորում ստեղծված «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան գյուղատնտեսական քոլեջ հիմնադրամը», որը 2020թ. սեպտեմբերից պետք է ընդունվելու էր մասնագիտություններին կառավարելու 5 մասնագիտություններին գծով՝ հաշվի առնելով Քաշաթաղի շրջանի գյուղատնտեսական ներուժը, առանձնահատկությունները և զարգացման նախադրյալները: Քաշաթաղից և մյուս շրջաններից 9-րդ դասարանն ավարտած երեխաները կարող են դիմել և ընդունվել: Հիմնադրամի միջոցով կլուծվի գյուղատնտեսական որակյալ մասնագետների խնդիրը:

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում իրականացվում են արդիականացման աշխատանքներ «Քրիստոնյաները կարիքի մեջ» հասարակական կազմակերպության հետ համատեղ: Համագործակցություն է սկսվել Իտալիայի Միլան քաղաքում գործող Դոն Կառլո Գնդիի անվան ուսումնարանի հետ: Ստեփանակերտի ուսումնարանում սկսվել է նոր փայտամշակման արհեստանոց-արտադրամասի շինարարությունը, որը կհամալրվի բարեգործական խողովակներով առաջված ժամանակակից սարքավորումներով, և որտեղ իտալացի վարպետները մարտ ամսին կսկսեն իրականացնել կրթական նոր ծրագիր: Նույնպիսի ծրագրեր և մասնագետների Իտալիայում վերապատրաստման միջոցառումներ են նախատեսված վար-

աժիրական և հասարակական սննդի խմբերի ուսանողների համար: Սեպտեմբերից կներդրվի նաև կարի արտադրության տեխնոլոգիա՝ հիմնական և միջնակարգ կրթության հենքի վրա: Վարպետները կժամանեն Իտալիայից և երկարաժամկետ կաշխատեն այստեղ՝ մեր երեխաներին տալով այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են նշված մասնագիտություններով որակյալ վարպետ դառնալու համար, ինչը շատ պահանջված է մեր աշխատաշուկայում:

Մարտունու արհեստագործական ուսումնարանի ուղղությամբ ևս որոշակի աշխատանքներ են տարվել: ԱՄՆ-ից բարերար Հակոբ Բուռնազյանի աջակցությամբ այն համալրվել է անհրաժեշտ գործիքներով ու սարքավորումներով: Առաջիկայում ձեռք կբերվի նաև տրանսպորտային միջոց:

Շարունակվել է 9-րդ դասարանցիների մասնագիտական կողմնորոշման ծրագիրը: Բոլոր իններորդյակների համար նախարարությունը հնարավորություն է ստեղծել այցելել Ստեփանակերտի ռազմամարզական վարժարան, Շուշիի «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարան և Արսեն Խաչատրյանի անվան հուճարահար քոլեջ՝ ծանոթանալու միջին մասնագիտական ոլորտում առկա կրթական հնարավորություններին: Նախարարի վկայությամբ արդեն նկատելի է էական փոփոխություն նշված հաստատություններում ընդունվող քանակական մեջ. այսպես՝ «Եզնիկ Մոզյան» ընդունվածների մեծ մասը այդ որոշումը կայացրել է մեծապես էքսկլուզիվաների արդյունքում:

Բարձրագույն կրթության ոլորտում կարևորագույն աշխատանքներից է եղել բուհերի հավատարմագրման գործընթացը: Արցախում գործող հինգ բարձրագույն ուսումնական հաստատություններից չորսը ԳԳ որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) են ներկայացրել ինստիտուցիոնալ հավատարմագրման հայտեր: Բացառություն է կազմում «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտը, որն այս պահի դրությամբ չունի համապատասխան ռեսուրս, և ներկայումս նախարարությունը բուհի ղեկավարության հետ քննարկում է հետագա անելիքները բուհի գործունեությունը չընդհատելու, վերականգնակերպելու ուղղությամբ: 2020թ. ավարտին կհասցվի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, աշխատանքներ կիրականացվեն բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքային և կազմակերպարական փոփոխությունների նախապատրաստման, մասնագիտական որակավորումների ճանաչման, ակադեմիական շարժունակության իրավունքի իրացման ուղղությամբ: Նախարարությունը քննարկումներ է նախաձեռնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ԱԳ օրենքի նախագծի շուրջ և բուհերից ստացել առաջարկություններ: Նախարարությունը նոր մշակույթ է ձևավորում՝ ոչ թե սպասել, որ Հայաստանում օրենքներով, այլ փորձում է մասնակցել ԳԳ նախագծի քննարկմանը. առաջիկայում Արցախից առաջարկությունները կուղարկվեն հայաստանյան գործընկերներին:

Բարձրագույն կրթության ոլորտում նախարարությունը շարունակելու է սոցիալական որոշ խմբերի բուսման վարձի փոխհատուցման ծրագրերը: Փոխհատուցվել է սոցիալական որոշ խմբերի 118 ուսանողների, այդ թվում՝ ԱԳ պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերի ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա ուսուցմամբ վճարովի համակարգում սովորող զոհված զինծառայողների և Արցախյան ազատամարտի 1-ին կարգի հաշմանդամների զավակների, 1-ին և 2-րդ կարգի

հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ ուսանողների, ինչպես նաև ԱԳ բուհերի բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող՝ Պաշտպանության բանակի ծառայության մեջ և պահեստազորում գտնվող սպաների 361 զավակ-ուսանողների ուսման վարձավճարը, պետական աջակցություն է ցուցաբերվել 36 ուսանողի՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանում և 11 ուսանողի՝ արտերկրի հեղինակավոր բուհերում ուսումը շարունակելու և կրթական ծրագրերին մասնակցելու նպատակով:

Փոփոխություններ են կատարվել նաև **գիտության** ոլորտում: Այս ոլորտում շարունակվել են թեմատիկ ֆինանսավորման ծրագրերը, և ավարտին են հասցվել պետական ֆինանսավորմամբ իրականացված 5 թեմաներ: Արցախի գիտական կենտրոնի կողմից հայտարարված՝ 2019 թվականի գիտական մրցույթի արդյունքներով հաստատվել և ֆինանսավորման են ներկայացվել ևս վեց գիտական թեմաներ, որոնցից մեկը հրաժարվել է: Ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով փոփոխություններ են կատարվել պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական թեմատիկ հետազոտությունների մրցույթի անցկացման կարգում: Նախ հանվել է սահմանափակումը, և հնարավորություն է ընձեռնվել մրցույթին մասնակցելու նաև ԳԳ-ից և արտերկրից գիտական աշխատողներին՝ կարևորելով գիտական թեմայի առնչությունը Արցախին: Նախարարությունն առաջիկայում առաջին անգամ մրցույթ է հայտարարելու պետական վերջին շրջանակում, այսինքն՝ գործադիր կողմից ներկայացված թեմայի հետազոտման համար: Ն. Աղաբալյանն այն կարծիքին է, որ այս ուղղությամբ պետք է ավելի ակտիվացվեն աշխատանքները, որովհետև այսօր մեր տնտեսության մեջ առկա են տարբեր հիմնախնդիրներ, որոնք գիտական հետազոտության անհրաժեշտություն ունեն, և այդ աշխատանքներում պետք է անգայման ներգրավվեն գիտնականները: Գործադիրի հետ հասակցվելու են բոլոր այդ հիմնախնդիրները, որոնց մեջ անհրաժեշտ են գիտական հետազոտություններ: Նախարարությունը փոխել է նաև գիտական հաշվետվությունների տրամադրման ձևը: Այսինքն՝ պետք է ապահովվի գիտական թեմայի արդյունքի կիրառական նշանակությունը, և այս ուղղությամբ զգալի անելիքներ կան գիտական արդյունքի առևտրայնացման ուղղությամբ: Առաջիկայում նախատեսված է ԳԳ գիտության պետական կոմիտեի հետ համատեղ քննարկում Արցախում գիտության զարգացման խնդիրների շուրջ:

Սպորտի ոլորտում շարունակվել են մարզական ֆեդերացիաներին աջակցությունը և միջոցառումներին մասնակցության ֆինանսավորումը: Կազմակերպվել են բազմաթիվ մրցաշարեր, առաջնություններ: 2493 մարզիկներ մասնակցել են մրցաշարերի և առաջնությունների, որից 1817-ը՝ ԳԳ, 79-ը՝ Եվրոպայի, 23-ը՝ աշխարհի, 574-ը՝ միջազգային: 145 մարզիկներ ու մարզիչներ արժանացել են պետական պարգևների ու խրախուսական մվերների: 2019-ը առանձնացել է աննախադեպ սպորտային իրադարձություններով. CONIFA, Համահայկական 7-րդ խաղեր, Սպորտային պարերի միջազգային մրցույթ՝ «Պար առանց սահմանի» խորագրի ներքո: Նախարարը տեղեկացրեց, որ 2020թ. որոշ փոփոխություններ են կատարվելու մարզֆեդերացիաներին աջակցության կարգում, ինչը նպատակ ունի էլ ավելի խրախուսել օլիմպիական մարզածների զարգացումը: Հետագայում նախատեսված է նաև փոփոխություն տարբեր առաջնություններում լավագույն արդյունքներ արձանագրած մարզիկներին ու մարզիչներին խրախուսելու կարգում:

Ն. Աղաբալյանը պատասխանեց լրագրողների հարցերին:

ՀԱՆՌԻՊՈՒՄ

ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՑԵԼԵՑ ԳՅՈՒՂ

Փետրվարի 13-ին Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը և նախարարության տեսչության պետ Մանվել Մխիթարյանը այցելեցին մեր՝ Սզնեքի Գրիշա Միքայելյանի անվան միջնակարգ դպրոց:

Կրթության հետ ընդհանուր ծանոթությունից հետո հանդիպում ունեցան աշակերտական կոլեկտիվի հետ: Քննարկվեցին հարցեր ուսման որակի և նրա բարձրացման մասին: Նշվեց, որ ուսման որակի առումով դպրոցը ճանաչված է որպես առաջնային, ինչպես նաև հանրապետության մեջ ևս գրավում է առաջնային տեղը առարկայական օլիմպիադաներում ցուցաբերած բարձր արդյունքների շնորհիվ:

Տիկին Աղաբալյանը խոսեց նաև գյուղապահպանության խնդիրների մասին և աշակերտներին մատչելի լեզվով բացատրեց, որ ամեն մի գյուղ մեր հայրենիք-օրգանիզմի մի բջիջ է, և մեր պարտքն է այն կենդանի պահել: Ապա ավելացրեց.

- Ձեր գյուղը այս գեղատեսիլ բնության մեջ, գետակի ափին, անտառով շրջապատված, կարծես հուշում է ձեզ, որ կրթություն ստանալուց ու մասնագիտություն ձեռք բերելուց հետո կրկին վերադառնաք իր գիրկը: Գյուղը,- շարունակեց նախարարը,- մայրաքաղաքից գտնվում է 18 կմ հեռավորության վրա, Ստեփանակերտ-Կարմիր շուկա մայրուղուց 2 կմ հեռավորությամբ, և դուք կարող եք գյուղում ընտանիք կազմել, բիզնես դնել և նույնիսկ ամեն օր քաղաքում աշխատանքի գնալ ու վերադառնալ օջախները, որպեսզի գյուղը կենդանի պահեք:

Նախարարը և տեսչության պետը բարեհամբույր կերպով պատասխանեցին իրենց ուղղված հարցերին և քաջալերեցին երեխաներին արհեստ սովորել քե՛լ Շուշիի և քե՛լ Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարաններում, որտեղ առաջիկայում բարվոք փոփոխություններ տեղի կունենան որակական և մասնագիտությունների քանակի ավելացման առումով:

Նա իր խոսքն այսպես ավարտեց.
- Արհեստը կաթ-կաթ աղբյուր է, և եթե չվարարի, չի էլ ցամաքի:

Այնուհետև կայացավ հանդիպում ուսուցչական կոլեկտիվի և համայնքի ներկայացուցիչների հետ: Խոսվեց երկկողմանի հետաքրքրություն առաջացնող թեմաներից՝ ուսման որակի բարձրացում, աշակերտական կոնստիդենտի անընդհատ նվազում, գյուղապահպանություն, գյուղում աշխատատեղերի ստեղծում, գյուղը ծերացումից փրկելու հիմնական միջոցներ և այլն:

Նախարարն ասաց, որ բոլորը գիտեն մեր դպրոցի ուսման բարձր որակի մասին, բայց եթե այս տեսլանքով գնանք, կկորցնենք շատ բաներ, նույնիսկ՝ դպրոցը (նախարարը նկատի ուներ գյուղի ծերացումը, բնակչության և աշակերտների քանակի նվազումը. ամեն դասարանում կա 1-2 աշակերտ, դասարան-կոմպլեկտների թիվը նվազագույն է):
Նա խորհուրդ տվեց գյուղում ստեղծել աշ-

խատատեղեր, թեկուզ ջերմոցների, փոքր անասնապահական ֆերմաների, արտադրական տեղամասերի և այլ տեսքով:

Մեր գյուղը հնուց դերձակների գյուղ էր Արցախում, ինչո՞ւ կրկին չվերադարձնել դերձակությունը:

Նախարարի մյուս առաջարկն էր՝ գյուղում ստեղծել հանգստյան գոտիներ, քանի որ գյուղն ունի եզակի բնություն, բազմաթիվ աղբյուրներ ու գետակ:

Մեկ հանգստյան գոտի, որ գտնվում է երկու Սզնեքների արանքում, քչքչան գետի ափին, անտառին կից գեղատեսիլ վայրում (Վերին Սզնեքի գյուղապետ Ալբերտ Մարգարյանը հաստատեց և լրացրեց նախարարի միտքը, որ այն մասնակի գործում է, և պատրաստ է իր ծառայությունը մատուցել պահանջվելու դեպքում):

Այնուհետև հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի, ինչպես նաև գրույցի ձևով, որի ժամանակ տողերիս հեղինակը հայտնեց, որ իրեն հետաքրքրում են ամենից առաջ երկրի պաշտպանության ուղղությամբ տարվող աշխատանքները և այս գործում կրթության դերը:

Մենք աշխարհին խոշոր գիտական ուղեղներ ենք տվել, բայց այսօր մեզ պետք են խորը գիտելիքներով, մաթեմատիկական մտածողությամբ, ինժեներական հմտություններով դպրոցի շրջանակարտներ, որոնք կստեղծեն ու կզարգացնեն մեր ռազմարդյունաբերական համալիրը և տնտեսությունն ընդհանրապես:

Այո՛, սա դժվար գործ է, բայց անհրաժեշտ, կենսական խնդիր է, որի իրագործման համար հարկավոր է պետական միջոցներից բացի ստանալ մեծահարուստ հայրենասեր բարեգործների աջակցությունը: Բնական գիտությունների դերը մեծ է ապագա Համբարձումյաններ, Ալիխանյաններ, Իսսիֆյաններ ունենալու համար: Այժմ դպրոցի բնական գիտությունների առարկաների դասաժամերի քանակի ավելացում է պետք: Դասագրքերի որակի և թեմաների շարադրման մեջ պարզապես մեթոդներով բնագիտական առարկաների դասագրքերում շարադրանքը պետք է դյուրին ու գործնական դարձնել:

Այս ամենի համար պարարտ հող պետք է ստեղծել խրախուսական միջոցներով: Կարծում ենք՝ խրախուսանքներն ավելի կենսունակ և բովանդակալից կլինեն, եթե խրախուսվեն ոչ միայն աշակերտները, այլև ուսուցիչները, ինչպես անում են սպորտում՝ խրախուսելով մարզիչներին, քանի որ ուսուցիչն էլ աշակերտի մտքի մարզիչն է:

Երկրի անվտանգությունը կարևոր և պարտադիր ազգային արժեք է:

Առաջարկում են բանակին կից ստեղծել կորդինացիոն կենտրոն, որտեղ կարող են ընդունել մաթեմատիկական հատուկ ուսուցիչներն ու մտածողություն ունեցող, ֆիզիկայից խոր գիտելիքների տեր տղաներին դպրոցի գորակալի հասակի շրջանավարտներից՝ ուղղորդելու նրանց հատուկ ջոկատ, որտեղ կկրթվեն ու կդառնան հետագա-

յուն ռազմարդյունաբերական համալիրի բարձրորակ գիտական կադրեր:

Հուսով եմ՝ բանակին կից ստեղծված կորդինացիոն կենտրոնը իր խորհրդական ու գիտական աջակցությունը կստանա և՛ կառավարությունից, և՛ անհատ գիտնականներից: Կարելի է մտածել նաև այլ ձևով, միայն թե մեր արտակարգ ընդունակություններով և մտածելու գերագույն կարողությամբ ուղեղները կրթվեն ու ծառայեն մեր ժողովրդի պաշտպանության կայունացմանն ու հայրենիքի հզորացմանը:

Խորհրդային տարիներին և այսօր էլ տարբեր եղանակներով՝ օլիմպիադաներ, տարբեր ձևի մրցումներ, ամվճար ուսուցում և այլն, զայթակղում և իրենց մոտ են քաշում մեր արտակարգ ուղեղներին ու դարձնում իրենցը: Սա մեզ հարիր չէ ոչ սազական:

Ժամանակն է, որ հայ ժողովուրդը ծնի իր Նորեյան մրցանակակիրներին: Հայ ժողովրդի ճկուն մտքի այսօրվա, գուցե և վաղվա ճարտարապետները կստեղծեն այնպիսի գեներ, որի շնորհիվ մեր թշնամին վախից հավիտյան կլռեցվի, և այս դեպքում ազգիս ծովածուփ ժպիտը ու նրա երկնափառ հույսերը կծիածանվեն:

Հուսով ու հավատով եմ, որ դպրոցի առարկայական և լիարժեք բարեփոխումներից հետո մեր երկիրը կդառնա կրթության արտահանող երկիր, կրթությունը կդառնա արժեք ու բոլորիս մտահոգության առարկան:

Այսօր թշնամու խոսքի տոնայնության իջեցումը կախված է մեր երկրի ու բանակի հզորացումից, զինվորի նկատմամբ մեր հոգատարությունից, մեր զավակների նկատմամբ վերաբերմունքից:

Այսօր մեր ժողովուրդն ունի մեկ զինվոր, մեկ հայրենիք և մեկ զինվորի մայր: Ուրիշ մտածողություն և հայրենասիրության ուրիշ բանաձև մեր ազգի համար ընդունելի չէ: Մեր ազգի թշնամին զարմանալիորեն կարողացել է մասնատել, իսկ այժմ գիտենք, որ մեր հաղթանակների սրբություն սրբոցը միասնությունն է: Մենք պետք է կարողանանք պետության շահը վեր դասել ընտանեկան շահից՝ ինչքան էլ տարօրինակ հնչի:

Այսօր մենք շատ ենք խոսում սրբությունների ու ազգային այլ արժեքների մասին, բայց խոսելը դեռ բավական չէ, պետք է գործել: Այլապես սերունդները մեզ չեն ների:

Պետք է երկիրը դարձնել ինտելեկտուալ զարգացած տեխնոլոգիական, մասնավորապես՝ զարգացած ռազմարդյունաբերական երկիր, արդյունքում կունենանք ապահով ու ճանաչված հայրենիք:

Գյուղապահպանության գործում համայնքի և դպրոցի տնօրենների համատեղ աշխատանքը և համատեղ պատասխանատվությունը կենսական պահանջ է:

Այո՛, խորհրդային տարիներին հենց համատեղ պատասխանատվությունն էր, որ կենդանի է պահել մեր գյուղերը և մեր դպրոցները, և ինչո՞ւ այն այսօր չկիրառել:

Այսօր մեր բացերից մեկը համայնքներում ակտիվ ավագանի չունենալն է, իսկ դպրոց-

ներում լավ կոլեկտիվների (ոչ աշխատանքային խմբեր) ու լավ մասնագետների բացակայությունը և այլ պատճառներ, ինչպես նաև վերադասի ոչ պատշաճ վերահսկողությունը դառնում են գյուղերի զարգացման արգելափակիչ ուժ:

Որպեսզի ընթերցողն ինձ չմեղադրի, և գյուղապահպանության գործում իմ կատարած եզրակացությունն ու խոսքերը մերկապարանոց չինչնան, նշեն, որ 13 տարի դպրոց են ղեկավարել՝ լինելով նրա տնօրենը, 3 տարի գյուղական խորհրդի նախագահ եմ եղել, 4 տարի՝ կոլվարչության նախագահ և 10 տարի գյուղապետ՝ առանց կտրվելու դպրոցից: Միշտ էլ իմ աշխատանքը, մասնավորապես գյուղապահպանության գործում, խրախուսվել և արժանացել է կառավարական գնահատականների:

Անգլիական թագավորական գիտական ընկերության նախագահ Դևիդն հարցրին, թե որն է իր ամենամեծ գյուղը:

- Ֆարադեյին հայտնագործելը,- պատասխանեց նա: (Ֆարադեյ՝ կազմարարից աշխարհահռչակ ֆիզիկոս, բազմաթիվ գյուղերի հեղինակ, էլեկտրականության գյուտի հեղինակ):

Այո՛, այսօր ոչ պատերազմ, ոչ խաղաղություն տիրող Արցախում մեզ պետք են խելացի և կիրթ շրջանավարտներ՝ ապագա Մերոյաններ, Ֆարադեյներ, Սախարովներ ունենալու համար:

Ազգային մտածողություն ունեցող ամեն մի ուսուցիչ եթե կարողանա դաստիարակել գոնե ազգային մտածողությամբ մեկ զավակի, ապա իմացեք, որ նա իր կյանքի առաջատարն է, առանց խղճի խայթի խաղաղ նավահանգիստ կիջեցնի:

Տիկին նախարարին ևս մի միտք հաղորդեցի, որն իմ կարծիքով միայն օգուտ կբերի: Խորհրդային ժամանակ թերթերում տպագրված ամեն մի հոդվածում նշված առաջարկություններն ու դիտողությունները կյանքի էին կոչվում, իսկ հիմա...

Նախարարը և տեսչության պետը շատ բարեհամբույր կերպով պատասխանեցին իրենց հասցեագրված բոլոր հարցերին: Ն.Աղաբալյանը նշված հանդիպումներում և գրույցներում առաջ է քաշել և՛ կրթական, և՛ գյուղապահպանության բազում մտահոգիչ խնդիրներ: Եվ ամենից կարևորը՝ այդ խնդիրների լուծման իր տեսլականն ու աջակցությունը:

Վերջում դպրոցի տնօրեն Մելիքսեթ Սահակյանը, Ներքին Սզնեքի գյուղապետ Էդվարդ Մուսայելյանը և Վերին Սզնեքի գյուղապետ Ալբերտ Մարգարյանը շնորհակալական խոսքով ավարտեցին հանդիպումը և խոստացան կյանքի կոչել ծագած խնդիրների լուծումը: Հանդիպումը շատ արդյունավետ էր: Թող այն լինի շարունակական և ընդօրինակելի:

Շահեն ՄԱՐԳԱՐՅԱՆ
Գ. Սզնեք

ԷԲՍԿՈՒՐՍԻՎ ԳԵՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

Օրերս ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը Շահունյանի շրջանի դպրոցների 9-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպել էր ճանաչողական էքսկուրսիա Շուշիի «Եզնիկ Մոզան» արհեստագործական ուսումնարան: Այնտեղ երեխաները ծանոթացան ուսուցանվող մասնագիտություններին, կեցության և ուսումնառության պայմաններին: Ուսումնարանի փոխտնօրենը, ուղեկցելով երեխաներին, հանգամանալից բացատրեց, թե որ մասնագիտությունը ինչ հնարավորություններ ունի, ուսումնառության ընթացքում նրանց ընձեռնվող հնարավորությունները: Շրջապայության հաջորդ կանգառը Ստեփանակերտում էր: Երեխաներն այցելեցին Քրիստափոր Իվանյանի անվան ռազմամարզական վարժարան: Նրանց դիմավորեց ուսումնարանի անձնակազմի հետ տարվող դաստիարակչական աշխատանքների գծով հրամանատարի տեղակալ մայր Զ. Բաղդասարյանը: Խոսելով իրենց ուսանողների հաջողություններից ու գործունեությունից՝ նա ներկայացրեց նրանց առօրյան, ձեռքբերումները, սովորողին տրվող արտոնությունները: Այս ուղեկցեց ուսումնարանի Փառքի սրահ, հոգեւոր սենյակ, մարզադահլիճ: Վերջինս հագեցած է ապագա զինվորի ֆիզիկական կարողությունները կոփելու բոլոր սարքավորումներով ու սրահներով, իսկ պատերին փակցված էին ուսումնարանի տարբեր տարիների ընթացքում

ծեռք բերած հաջողությունների մասին տեղեկություններ: Մեր այցը զուգարկապես 10-րդ դասարանում ՆՁՊ առարկայից անցկացվող ցուցադրական դասին: Այն վարում էր կապիտան Գ.Աղաբալյանը: Աշակերտներն ակամատես եղան ուսումնական նոնակի նետման եւ մի քանի այլ հնարների:

Ձիվորակալ ճաշացանկը, իրար կողքի գեղեցիկ դասավորված սեղաններն սպասում էին մեզ ճաշարանում: Այցելություն Ստեփանակերտի Ս. Հովհանու Աստվածածին եկեղեցի նախա-



րարությունը չէր մոռացել ծրագրել՝ միախառնելով հոգեւոր եւ մշակութային արժեքները:

Շնորհակալություն ԱՀ ԿԳՍ նախարարությանը՝ ի դեմս Ն. Աղաբալյանի, որը հոգ է տանում նաեւ շրջանում սովորող դպրոցականներին ժամանակակից հնարավորություններին ծանոթացնելու մասին:

Ս. ՓԻԼԱՅՅԱՆ

ԳՆԱՀԱՏԱՆԸ ՀԱՐԳԱՐԺԱՆ ԴԱՍԱԽՈՍԸ (ծննդյան 70-ամյակի առթիվ)



Սիկվա ՄԻՆԱՍՅԱՆ: Ծնվել է 1950թ. մարտի 8-ին Մարտակերտի շրջանի Չափար (Հակառակաբերո) գյուղում: 1968-1972թթ. սովորել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի մասնագիտությամբ: 1986թ. 33 էս. Արվյանի անվան մանկավարժական ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ («Հովհաննես Շիրազի պոեմների լեզուն ու ոճը»), ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ հայոց լեզվի մասնագիտությամբ: 1972-ից առասուր ԱրՊՀ հայոց լեզվի և գրականության, այնուհետև՝ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում է աշխատում: Տասնյակից ավելի գիտական գրքերի, հարյուրից ավելի հոդվածների հեղինակ է (մենագրություններ, բուհական ձեռնարկներ, ուղեցույց և այլն):

Բարի ու անաչառ անձնավորություն է հայոց լեզվի մասնագետ տիկին Մինասյանը, որն ավելի քան կես

դար է, ինչ աշխատում է Արցախի մայր բուհում: Նրա մեջ խտացված են մանկավարժի ու գիտնականի լավագույն հատկանիշները: Նրա համար սրբազան պարտավորվածություն է մայրենիից դրական գնահատել միայն աշխատասերին: Թեպետ մեզ առաջին անգամ դասավանդել է միայն չորրորդ կուրսում, բայց դեռ բուհական ուսումնառության սկզբից հենակա ծանոթ էինք նրա հեղինակած գրքով: Առաջին կուրսում, երբ ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն ու բառագիտություն բաժիններն էին ուսումնասիրում, ծանոթացանք հարգարժան Ս.Մինասյանի նաև «Արդի հայոց լեզու» (Ստ., 1999թ.) և «Հնչյունաբանության ու բառագիտության ուսուցումը բուհում» (Ստ., 2007թ.) գրքերին (դրանք նույնն էին, միայն երկրորդ տարբերակն ավելի ծավալուն է): Թեև այդ թեմաներին վերաբերող դասընթացն առաջին կուրսեցիների համար բավականին բարդ էր, բայց նշված դասագրքերում ամեն ինչ ներկայացված էր հակիրճ ու պարզ, համապատասխան դիպուկ օրինակներով, ինչը նպաստում է ուղիղընկալմանը: Եվ ահա չորրորդ կուրսում, երբ սկսեցինք ոճագիտություն ուսումնասիրել (դասախոսություններն ընթանում էին արդի պահանջները բավարարող լսարանում), հեղինակի «Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը» (Ստ., 2019թ.) և «Արցախի արձակագիրների լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ» (Ստ., 1997թ.) աշխատությունները դասախոսության թեմային զուգահեռ որոշ հարցերով մեզ հետաքրքրող դարձան: Դրանք մեզ համար հաճախակի գործածվող կողմնակի աղբյուրներ

են: Ոճագիտական թեմաները խորացնելուց գառ «Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը» գիրքն օժանդակեց նաև գաղափարական բովանդակության յուրացմանը (անուրանալի է Մեծն Շիրազի կատարած ահռելի ծառայությունը հայ ժողովրդի կնճռոտ հարցի լուսաբանման համար. այս գեղագիտական ընտիր գիրքը, որը կես դար ոտնահարվել էր գրաքննիչների կողմից, չէր հրատարակվել և միայն 2014թ. լույս տեսավ): Հեղինակը գաղափարական բովանդակության հետ միասին ներկայացրել է սյուժեն՝ համեմատելով Վահագն Դավթյանի համանուն պոեմի հետ և ընթերցողի համար բացահայտել շիրազյան ստեղծագործական աշխարհի անմասն գանձերը, տաղանդի խորությունը՝ հանդգնելու իրավաբանական հարցեր արծարծելու, մեր լուսավորչական եկեղեցու դատաբանական գործունեությանը ավելորդ զբաղվելու (Մխիթար Գոչի՝ Կիլիկյան Հայաստան գնալը, իրավաբանական բնագավառում փորձ ձեռք բերելը, վերադառնալը Հայաստան, ձեռնամուխ լինելը այդ հարցին և «Դատաստանագիրք» արարելը. դրան Շիրազն անդրադարձել է «Նախերգանքում»): Ս. Մինասյանի հեղինակած այս աշխատանքի վերաբերյալ ծավալուն հոդված է ներկայացրել Ա. Աթայանը («Հովհաննես Շիրազի պատմափաստասիրական վիպերգի մոր ընթացքում», «Թոնդրակեցիները», «Լուսարար» թերթ, 2019թ., օգոստոս):

Դրցենտ Ս. Մինասյանի «Արցախի արձակագիրների լեզվաոճական մի քանի առանձնահատկությունները» (Ստ., 1997թ.) գրքույլը մեզ հնարավորություն տվեց ոչ միայն խորացնելու որոշ հարցեր ոճագիտություն առարկայից, այլ նաև ծանոթանալու մեր համերկրացի տաղանդավոր արձակագիրների ստեղծագործական մտքին:

Հարգարժան դասախոսի՝ ոճագիտություն առարկայից վարած դասերը մեզ համար անցնում էին ներկայացվող պահանջներին համապատասխան, հայերենի ոճական որոշ նորանմուծներով հագեցած, բովանդակային հարցերով համապատասխան հարցադրումներով, վարժություններով, գծապատկերներով, աղյուսակներով (նույնիսկ բայականական համակարգում տեղ ունեն ուշադրություն գրավող, բայց ուսուցողական դասադրերում երբեք չնշված՝ հատուկ անուններից կերտված բայերը՝ Անդրանիկ-անդրանիկվել (հերոսանալ), Հիմալայ-հիմալայվել (սահագնացել, սրբանալ) և այլն): Սիկվա Մինասյանի տեքստը աշխատանքի արդյունք են «Մետաբ-

լու որոշ հարցեր ոճագիտություն առարկայից, այլ նաև ծանոթանալու մեր համերկրացի տաղանդավոր արձակագիրների ստեղծագործական մտքին:

Հարգարժան դասախոսի՝ ոճագիտություն առարկայից վարած դասերը մեզ համար անցնում էին ներկայացվող պահանջներին համապատասխան, հայերենի ոճական որոշ նորանմուծներով հագեցած, բովանդակային: Ամեն րոպե լսելով տիկին Մինասյանի գիտական խոսքը, ընդունելով դրվատանքն ու դիտողությունները՝ կարելի է շատ բան սովորել ոչ միայն ոճագիտությունից, այլև հայոց լեզվից ընդհանրապես:

Առաջին կիսամյակում, երբ ավարտել էինք ոճագիտության դասընթացը, մեզ ուսանողներին, անակնկալ եղավ: Տիկին Մինասյանը, գոհ լինելով մեր գիտելիքներից, բոլորիս նվիրեց «Բայի ուսուցումը բուհում» (Ստ., 2008թ.) գիրքը: Անկասկած, լավագույն նվերը գիրքն է, այն էլ այսպիսի գիրք, որտեղ ներկայացված է բայ խոսքի մասն իր ձևաբանական բարդություններով: Ուսումնամեթոդական այս ձեռնարկն օգտակար է բոլորիս: Բայ խոսքի մասը ներկայացված է համակարգված, թեմային հաջորդող համապատասխան հարցադրումներով, վարժություններով, գծապատկերներով, աղյուսակներով (նույնիսկ բայականական համակարգում տեղ ունեն ուշադրություն գրավող, բայց ուսուցողական դասադրերում երբեք չնշված՝ հատուկ անուններից կերտված բայերը՝ Անդրանիկ-անդրանիկվել (հերոսանալ), Հիմալայ-հիմալայվել (սահագնացել, սրբանալ) և այլն): Սիկվա Մինասյանի տեքստը աշխատանքի արդյունք են «Մետաբ-

սեի աշխարհը և լեզուն» (Ստ., 2003թ.), «Հատուկ անուններից կերտված բայեր» (Ստ., 2004թ.), «Չափար» («Հակառակաբերո» Ստ., 2010թ., հեղինակի ծննդավայրին է նվիրված այս գործը), «Աստվածաշունչ հայոց լեզուն» (Ստ., 2011թ., հայոց լեզվին, գրերին, Մ. Մաշտոցին նվիրված չափածոյի թեմատիկ խմբավորմանը գործ է՝ հավելված մայրենիին նվիրված գիտական խոսքով), «Բառաշերտային և իմաստաբանական մի շարք առանձնահատկություններն առակի ժանրում» (Ստ., 2012թ.), «ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի աշխատողների գիտամեթոդական գրքերը» (Ստ., 2014թ.), «Հովհաննես Շիրազ» (Ստ., 2014թ.), «Կոմիտաս Հակոբյանի ստեղծագործությունների լեզուն ու ոճը» (Ստ., 2017թ.) և այլ աշխատություններ:

Ս. Մինասյանը հեղինակ է նաև հարյուրից ավել գիտահանրամատչելի հոդվածների: Արցախյան հանրաճանաչ դասախոս, լեզվաբան, գիտնական Ս. Մինասյանի նշված գիտամեթոդական աշխատություններն օժանդակում են լրացնելու հայ բանասիրական գիտակարգի միտքը: Սովորողներին համար հաճելի է ունենորել կամ ընթերցել նրա խոսքը:

Լրանում է բազմավաստակ կին մտավորականի ծննդյան 70-ամյակը: Մրտանց շնորհավորում ենք և ցանկանում նոր ավյուն ու եռանդ ուսումնագիտական աշխատանքի բնագավառում, մաղթում քաջառողջություն, երջանկություն:

Հերմինե ԱՐԶՈՒՄՆԱՅԱՆ
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի IV կուրսի ուսանողուհի

ԱՆՄԱՑՈՐԴ ՆՎԻՐՈՒՄՈՎ



Հազարի մեջ գիսավոր է, Հոգեխաղ ու տենչազին, Փնտրում է նա լույս գիտության, Կանթեղ հույսի, իմաստության...

Ուսուցիչն այն անհատն է, ով իր շունչը խառնում է հայոց սուրբ հողին և նմանվում արարողի: Նրա մեջ հորդում է արարչության լույսը:

Մանկավարժությունը, հարկավ, այն բնագավառն է, որ պահանջում է ամենօրյա տրամաբան աշխատանք, ամեն օր հաշվետու լինել սեփական խղճի ու դաստիարակության առաջ: Այն միաժամանակ ստեղծագործություն է՝ յուրահատուկ լուծումներով, նրբերանգներով ու հնարամտության դրսևորումներով: Հանձարեղ է այն մանկավարժը, ով կարողանում է իր հնարամտությամբ ու պայծառ երևակայությամբ իր սաներին ուղեկցել դեպի նոր կյանք: Տեղին է նշել, որ տարիքը գնահատվում է ոչ թե տարիների գումարով, այլ նրա գործունեությամբ: Տողերս ճիշտ բնութագրում են Ասկերանի միջնակարգ դպրոցի ՄԿԱԳՏՏ Արիա Գյանջումյանին: Ներկայացնենք սիրված մանկավարժի անցած ճանապարհի կարևոր կանգառները:

Ծնվել է 1970թ. փետրվարի 27-ին

Ասկերանի շրջանի Փրջամալ գյուղում: Սովորել է Նախիջևանի միջնակարգ դպրոցում: Դեռևս դպրոցական տարիներին ցուցաբերած նրա ակտիվությունն ու բազմատաղանդ լինելը խոսում էին այն մասին, որ կյանքի դժվարությունները հաղթահարելն ու հաջողության բարձունքները նվաճելը նպատակ պիտի լինեն նրա բովանդակ կյանքի ընթացքում: Միշտ աչքի է ընկել շրջանային, հանրապետական օլիմպիադաներում և ռազմաճակատական մրցումներում՝ ապահովելով բարձր արդյունքներ: Հաջողությունները շարունակական էին: 1987թ. ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և հոգեբանություն» բաժինը: 1988թ. աշխատանքի է ընդունվել Ասկերանի շրջանի հնամաստ գյուղի մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: 1989-ին տեղափոխվել է Ասկերանի շրջանի մանկապարտեզ, իսկ 1994-ից առ այսօր աշխատում է Ասկերանի միջնակարգ դպրոցում: 1996թ. նշանակվել է դպրոցի կազմակերպիչ, իսկ 1998-ից աշխատել է որպես դասվար և 2005թ. հանրապետական «Լավագույն ուսուցիչ» մրցույթում հաղթող է ճանաչվել «Լավագույն ավանդույթները և նորարարությունը մանկավարժության մեջ» անվանակարգում: 2002 թվականից դպրոցում ստանձնել է ՄԿԱԳՏՏ պաշտոնը: 2008-ին Հանրապետական մանկավարժական ընթերցումներում հաղթող է ճանաչվել «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնախմբի «Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը» ենթաթեմայով, որը ներառվել է Ընթերցումների գրքում: 2010թ., լինելով դպրոցի «Հայ ասպետ» թիմի ղեկավար, մասնակցել է Երևանում անցկացվող հեռուստամրցույթին և

անմախաղեպ հաջողությունների հասել՝ ունենալով երեքանգամյա հաղթանակ, որին չի հասել Արցախի ոչ մի դպրոցի թիմ: Ա. Գյանջումյանի բեղմնավոր գործունեությունը շարունակվում է հետագայում ևս: Քրտնաջան աշխատանք տանելով ՀՀ-ում անցկացվող այլ հեռուստամրցույթներում՝ ոչինչ չի խնայել աշակերտ պատրաստելու և մասնակցություն ապահովելու համար: «Ամենախելացի» հեռուստամրցույթում նրա աշակերտ Աշոտ Գաբրիելյանը, ցուցաբերելով փայլուն գիտելիքներ, ճանաչվել է խաղի հաղթող՝ բարձր պահելով թե իր ուսուցչի և թե կրթօջախի անունը: 2011թ. դպրոցի արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար հանրապետությունում զբաղեցրել է առաջին տեղը: Արժանացել է տարաբնույթ մրցանակների՝ Ասկերանի շրջարջակազմի, ՀՀ-ում «Այբ» կրթական հիմնադրամի և շրջանի կրթության բաժնի կողմից բեղուն ու արգասավոր գործունեության համար:

Մատաղ սերնդին կրթելն ու դաստիարակելը Ա. Գյանջումյանը դարձրել է կյանքի ուղենիշ, հաճույք է ստանում, երբ հոգում անթողած կրակը փոխանցում է մարդկանց: Լինելով աշխատասեր, պրպտող, նորարար ու ստեղծագործ և չբավարարվելով իմացածով՝ մշտապես ձգտում է կատարելության. գիտելիքների իմացության ծովում քնեղ պարզած՝ ծախում է առաջ՝ դեպ նոր հորիզոններ: Միտքը կշռադատված ու սուր է, նպատակային ու ճկուն:

Կյանքի ճիշտ ուղի է ընտրել Արիան և բոլորանվեր սիրով ու հավատամքով նվիրված է իր կյանքի պոեզիա դարձած մանկավարժական սրբազան գործին: Նա կարողանում է

կողմնորոշվել ցանկացած իրավիճակում, գիտության բոլոր բնագավառներից ունի ասելիք, դժվարությունների առջև երբեք չի ընկրկում, պայքարող է, երբեք չընկճվող: Կյանքի փորձություններն ու ուրբաները նրան ավելի են կուխել, ու դրանից չի փոխվել մարդկանց նկատմամբ զգասիրտ ու կարեկից վերաբերմունքը, որ միայն իրեն է հատուկ: Հոգով միշտ երիտասարդ ու գեղեցիկ մեր հերոսանիկն լի է կյանքի նկատմամբ անսպառ սիրով ու եռանդով: Քիչ են այն դեպքերը, երբ մարդ իր մտավոր ողջ հարստությունը պատրաստ է կիսել մարդկանց հետ՝ բոլորի համար ապահովելով նոր կարողություններ ու հմտություններ: Այո, հենց այդպիսին է նա, որը ջանք չի խնայում դպրոցի աշակերտների և նրանց ընտանիքների համար ավանդական դարձած միջոցառումների կազմակերպման համար: Նա համոզված է, որ կյանքի հաջողությունների գրավականներին մեկը բարձր ինտելեկտուալ ունակությունների ու տրամաբանական հնարների տիրապետելն է: Արիան կարողանում է իր աշակերտների մոտ վստահության հասնել, տիրապետում է աշակերտի հոգու նուրբ լարերին:

Մշխատանքում դրսևորած Արիայի նվիրվածությունն ու պատասխանատվությունը ընտանիքում ունեցած նրա հաջողությունների հետ են կապված: Ահավասիկ, սեփական երեխաների ճիշտ դաստիարակությունը սովորել է իր արգասավոր պտուղները: Ա. Գյանջումյանը ունի երեք չափահաս զավակներ: Ավագ որդին՝ Սևակը, ստացել է բարձրագույն կրթություն և այսօր Պաշտպանության բանակի սպա է: Դուստրը՝ Լիլիթը, նույնպես բարձրագույն կրթություն ունի. ամուսնացած է, ունի

երկու երեխա, աշխատում է «Կոնվերս» բանկում: Իսկ կրտսեր որդին՝ Հովհաննեսը, Ի.Չերասուրյանի երկրորդ կուրսի ուսանող է: «Առողջ ընտանիք, առողջ հասարակություն» կարգախոսով է առաջնորդվում Ա. Գյանջումյանը՝ իր մեջ ունեցած սերն ու ջերմությունը նվիրաբերելով հարազատներին ու մտերիներին: Նա միաժամանակ լավ ընկեր ու խորհրդատու է երիտասարդ ու սկսնակ ուսուցիչների համար: Ա. Գյանջումյանը նաև ակտիվ հասարակական գործիչ է, անտարբեր չէ երկրում տեղի ունեցող իրադարձություններին, անդամակից է «Մայրություն» հասարակական կազմակերպությանը, «Ազատ հայրենիք» կուսակցության Ասկերանի համայնքի «Կանանց խորհրդի» նախագահն է: Համայնքային կյանքում փոփոխություններ մտցնելու հնարավոր առիթներով զբաղվում է նաև բարեգործական աշխատանքներով:

Ջերմ ու իրական ակնկալիքներով, լավատեսությամբ հուսանք և հավատանք, որ նա մոտ ապագայում կունենա մտավոր-հոգևոր արարումների առավել բեղուն շրջան:

Ա. Գյանջումյանի հավատանքն է. «Մշտապես լինել որոնումների մեջ, համարձակ, ձեռք բերել նորը, ժամանակակիցը, երբեք չգոհանալ ձեռք բերածով՝ հավատացած, որ ինքնագիտությունը մտավորականի ծախողման առաջին փուլն է»:

Միլիոն գործընկեր, շնորհավորում ենք հորեյանիդ առթիվ, մաղթում ենք քեզ արևաշատություն, ամենայն բարիք քո պատվաբեր աշխատանքում:

Ասկերանի միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

ՀԱՆՃԱՐԻ ԼՈՒՅՍ

ՄԵՋ ԵՒ ԱՆԵՃԱՐԻ ԶԱՐԵՆՑ



1897թ. մարտի 13-ին ծնվել է հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը: Ժամանակն ինչքան հեռանում է նրանից, այնքան նրա խորախորհուրդ գրական ժառանգությունը նոր շերտեր է բացում մեր առաջ: Եվ «Ժամանակի շունչը» դառնալու գրողի նրա բանավածը հավասարապես վերաբերում է ընթերցողներին՝ հանճարի ամեն տողի մեջ մեր ժամանակը տեսնելու գաղտնագրումն ըմբռնելով, քանզի «մեծ պոետի նետի նշանի ահագնությունը» հանճարներ սերելու պատգամախոսություն է նաև:

Անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել ՄՈՒՐԱՅԱՆԻ հետ սույն գրույցը թերևս Չարենցի հանճարի նորովի ըմբռնման մի բացահայտում է: Գրականագետի հետ մեր գրույցը գլխավորապես գրողի «Երկիր Նաիրի» վեպի մասին է, որը նա գրել է 1921-1924թթ. և նկարագրում է երկրում տիրող պատմաքաղաքական իրավիճակը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Չարենցը վեպում կենտրոնացնում է այնտեղ ապրող նաիրցիների ազատատենչության և հետագա ծանր պարտության վրա: Վեպն այն մասին է, թե ինչպես դեպքերի թավալվող արագությամբ ընկավ նաիրյան այդ քաղաքը, և Չարենցը հարց է ծնում՝ ինչու և ինչպես:

Չարենցի այս գործը բոլորս ենք կարդացել, համենայն դեպս՝ միջին և ավագ սերունդը: Նոր սերնդի մասին նույնը չենք կարող ասել՝ հաշվի առնելով ընթերցանությունից նրա հեռացած լի-

նելը, բայց ոմանք երկի ընթերցած կլինեն:

- Հաստատ կարդացել եք «Երկիր Նաիրի» վեպը և չեք տեսել այն, ինչ Չարենցը գրել է,- այսպես սկսեց մեզ հետ գրույցը գրականագետ Սամվել Մուրայանը:- Ես էլ եմ շատ ուշ տեսել: Որովհետև ինձ էլ էին սխալ սովորեցրել իմ ուսուցիչները: Հետո երբ ես սկսեցի հատուկ նպատակով ուսումնասիրել Չարենց, հասկացա, որ Լենինին նվիրված բոլոր բանաստեղծությունները, բալլադները, պոեմները Չարենցը գրել է որպես ինքնապաշտպանական վահան՝ իրեն փրկելու համար, ասելու, որ Լենինի մասին իր կարծիքը դա է, թող բոլորն իմանան և չխուսեն: Բայց Չարենցը Լենինի իսկական կերպարը ստեղծել է «Երկիր Նաիրի» վեպում: Կարող եք կարդալ Չարենցի երկերի ակադեմիական հրատարակության 5-րդ հատորը, որտեղ «Երկիր Նաիրի» վեպն է՝ Ալմաստ Չարենցի ծանոթագրություններով: Դրանք այդ ժամանակաշրջանի կնիքն են կրում իրենց վրա: Չենք կարող մեղադրել, թե ինչու է այդպես գրել, որովհետև 1960-ականներին չէին կարող բացահայտ խոսել: Չարենցը վեպում գրում է, որ Կարսի անկումը սկսվեց 1917 թվականի փետրվարից: Այսինքն՝ ռուսական փետրվարյան հեղափոխությունը դարձավ Կարսի անկման պատճառ: Իսկ Կարսը Չարենցի համար խորհրդանշալ է, որ նշանակում է՝ ամբողջ Հայաստանի կորցրած տարածք: Կարսը Արևելյան Հայաստանում էր գտնվում, բայց այն նաև կորսված Արևմտյան Հայաստանի խորհրդանշան էր: Մեր ժողովրդից շատերը չգիտեն, կարծում են՝ Արաքսից այն կողմ գտնվող ամբողջ տարածքը Արևմտյան Հայաստան է: Մինչդեռ Արաքսի ափամերձ շրջանները Արևելյան Հայաստան են՝ Սուրմալուն, Իգդիրը, Կողբը, Կարսը...

- Չարենցը գրում է, որ հաջորդ օրը, 1917թ. մարտին «Երկիրից դուրս եկան զորքեր, զորքեր, զորքեր, թմրածներ, սվիններ, հրացաններ: Եվ ինչ է՝ դուք կարծում եք նրանք գնում էին Հավիտենական հիվանդի դեմ կռվելու»: Հավիտենական հիվանդը թուրքն է: Անունը չի կարողանում տալ: Ստիպված ասում է՝ Հավիտենական հիվանդ: Չի կարողանում ասել՝ թուրք: Որովհետև ժամանակ կար, որ մտածում էր, թե շուտով համաշխարհային հեղափոխություն կլինի, Հայկական հարցը կլուծվի: Եվ մույնիսկ «Ստաբուլ» պոեմում ասում է, որ Ֆաթիհ սուլթանը ձեռք բաժանեց արյան մեջ և խփեց Այա Սոֆիայի տաճարի պատին, բայց դեռ կգա ժամանակը՝ Ֆաթիհ Սուլթանի արյունոտ ձեռքը Այա Սոֆիայի տաճարից կմաքրի թուրք կոմսոնդը: Եվ այսպես է գրել, և իր իրական մտածողությունն է դրել: Այսպես է գրել պաշտպանվելու համար, բայց իրականում իր ազգային ցավը,

մտահոգությունն արտահայտել է ուրիշ կերպ: Վեպում գրում է, որ 1920թ. վերջերին Կարսի անկումն արդեն դարձավ անխուսափելի, որովհետև այդտեղ իրենց ստոր դերը խաղացին որոշ «նաիրազավաճան սրիկաներ»: Ովքե՞ր էին դրանք: Մեկը՝ Կարո Դարայանը: Ո՞վ էր Կարո Դարայանը: Ասում է՝ «Մոսկվաներում փչացած հաստագլուխ է, որին Մոսկվայից գործուղեցին Բաքու, որ թուրք նավթագործների պատամբություն կազմակերպի նաիրյան նավթային ընկերությունների դեմ»: Հայ նավթագործների Բաքվից վտարեցին Կարո Դարայանի մեծ մարդիկ, որոնք կազմակերպեցին թուրքերի պատամբությունը հայ նավթագործների՝ Մանթաշովի և մյուսների դեմ: Այնուհետև կարունակում է, որ դրանով չբավարարվեցին և Կարո Դարայանին գործուղեցին Կարս, որպեսզի այդ ստոր դավաճանը ժողովրդի մեջ խուճապ առաջացնի և Հավիտենական հիվանդի դեմ կռվող մեր մարտիկների մեջ դասալքություն քարոզի: «Նույն ստոր նպատակին էին ծառայում նաև պարոն Մարութ Դրաստամատյանը կամ Գրաստամատյանը և պակաս չարժանացած օրիորդ Սաթոն, որի օրիորդ լինելուն խիստ կասկածում էր ընկեր Վառդգյանը»: Սա էլ Կարա Տեսկինի, Ռոզա Լյուքսեմբուրգի, այն մյուսների մեծ բողջակների համաշխարհային ցարճերն էր: (Ի դեպ, մենք մեկն էլ Մուրացանի կինը՝ Ոսկի Տեր-Յովհաննիսյանն է եղել, որի պատճառով խելագարվեց խեղճ Մուրացանը):

«Իսկ ո՞վ է նրանց գլխավոր ղեկավարը: Կամ, ինչպես Հաջի Մանուկով Օնիկ էֆենդին պիտի ասեր՝ վերին գլուխը»: Լենինը չի՞ բոլշևիկների վերին գլուխը: Հիմա տեսե՞ք՝ ինչպես է տալիս Լենինի բնութագիրը: Իբր թե ասում է Հաջի Մանուկով Օնիկ էֆենդին: «Մի ռասացած մոնղոլ, մի արյունարբու սկյուռ, որ եվրոպայից կոլուված վագոնով եկավ Ռուսաստան, ներսում իշխանությունը գրավեց, համեմեց գերմանացիներին, որպեսզի այդպիսով իրականացնի արյունարբու Վիլհելմ կայսրին սոված իր խստունները»: Այստեղ չակերտը փակվում է, Հաջի Մուրացանի խոսքն ավարտվում է: Հեղինակային խոսքով Չարենցը գրում է. «Ահա թե ով է դրանց գլխավոր ղեկավարը»: Սա ամեն մարդ չի հասկանա: Համոզված եմ՝ կարդացել եք ու չեք հասկացել: Այստեղ գաղտնագիր կա: Չարենցյան հանճարը հենց այստեղ է:

Ինձ ցավ է պատճառում, որ մեր ժողովուրդը Չարենցին լավ չի ճանաչում: Չարենցին դարձրին Հոկտեմբերյան հեղափոխության երգիչ, Լենինի երգիչ: Մի ժամանակ այդպես եր պետք, երբ Չարենցին արդարացնելու խնդիր կար (Չարենցն արդարացվել է 1955թ.), պետք էր այդպիսի բաներ ասել, որ խորհրդային պետությունը Չարենցի իրավունքները վերականգներ: Այդ արեցին ու

ընկան կրակը: Հետո չարենցագիտությունը գնաց այդ ուղղությամբ: Բայց հետո եկան Հրանտ Թամարյանի, Էդվարդ Չրբաշյանի նման մարդիկ, կամաց-կամաց մաքրեցին այդ բաները և ցույց տվեցին, որ Չարենցը ազգային մեծ բանաստեղծ է:

1936թ. դեկտեմբերի 6-9-ը Չարենցը գրել է մի բանաստեղծություն, որը վերնագրել է՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստծո»:

Հատերին ծանոթ չէ այս բանաստեղծությունը: Գտեք «Եղիշե Չարենց. վերջին խոսք» վերնագրով ժողովածուն, որը լույս է տեսել 2007թ.: Դա կազմել և խմբագրել են Ալբերտ Իսոյանը և Անահիտ Չարենցը: Այդտեղ Չարենցի փրկված ձեռագրերի հիման վրա վերծանված ստեղծագործություններն են: Այդ «Ի խորոց սրտի» բանաստեղծությունը տեղադրված է, որը նշանակում է չորս մասից բաղկացած ստեղծագործություն: Չարենցը գրել է 4 տոմար, որոնք զարգացման տրամաբանական ընթացքով մեկը մյուսի շարունակությունն են: Դրանք ունեն բովանդակային շատ խոր ընդհանրացումներ: Դա որ կարդաք, կհասկանաք ինչ է Չարենցի ողբերգությունը: Ես միայն մի մասին կանդաղադանամ:

«Վկա» բառը ի՞նչ է նշանակում: Այսօրվա ըմբռնմամբ հասկանում ենք դեպքի ակնատես, դատարանում ցուցմունք տվող: Մինչդեռ իր նախնական իմաստով՝ նշանակել է հավատի և գաղափարի կամավոր նահատակ, մարտիրոս: Օրինակ՝ Սուրբ Ստեփանոս նախավկայի վանքը: Դրանք առաջին քրիստոնյաներն են, որոնք զոհվել են քարկոծվելով, ինքնագոհ կամավոր մարտիրոսներ են: Վկա՝ Չարենցը համարում է և՛ իրեն, և՛ Նարեկացուն:

Ինչպես դարձե՞ր առաջ - վկան Նարեկացի - Քեզ եմ հղում ես Ողբես, Ո՛վ Արարիչ («Խեղափոխության մեծ բանաստեղծ» և Արարիչ՝ - մեկնաբանություն):

Ես՝ մեղավոր քերթողըս աստվածարյալ դարի,- Ողջակիզյալ արյունս վարակածին...

Վաղ աղջամուղջը այնքան ըղձյալ Այգաբացի (Հայաստանի փրկության երգազանգն է - մեկնաբ.)

Մայրամուտի փոխվեց արյունակիծ,- Որ մեր արևն է նոր սուվվում արյունակի,

Որպես կարմիր գլուխ գլխատվածի...

Բորբ աչքերում, սակայն, հավատացյալ բյուրոց Ծովածավալ արյան ցուլը շռայլածին - Ցոլանում է իբրև ցուլ ցնծության մերո - Ցոլանում է իհրև վերադառնում դարձյալ...

Եվ ես դիմում եմ քեզ, ո՛վ Արարիչ դարձյալ, Ինչպես վկան մեր հին Նարեկացին,-

Քանզի կարոտ ոգու և անարյուն Հաջի,- Տեսնում եմ լուկ կացին արեգնացյալ:

Ու կախված է գլխիս իր ծանրությամբ կարմիր ժամանակը - որպես մի արեգնացյալ կացին:

Ես անասցի միայն իմ հանճարի ձայնիս, Ճանաչեցի լուկ մյուսն ինքնարարիչ,

Չկանեցա, Աստված, ես իմանալից բացի: Վաղ երգերս հղած կարմիր այգաբացին

Որք ու տրտունջ դարձան ու փոխվեցին լացի, Եվ այնքան բորբ հանկարծ անվերադարձ հանգավ

Անդրդվելի հավաստ դեպի գալիքն անբավ... Եվ ես - ահեղ, ինչպես Նարեկացին

Եվ գարիուրյալ այնպես և մենակյաց, Չարիտարանքիս հանդեպ անօգ կանգնած, Էլ ո՛ւմ դիմեմ, ո՛վ Տեր, արդ թեզանից բացի - Ինչո՞ւ այսպես անօգ ես մնացի...

Այս Չարենցին քանի՞ մարդ գիտի: **Ներկայացրեց Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

ԵՆՈՐԶԱՎՈՐ ԾՆՈՒՆԴՂ, ՄԵ՛Ր ՌԻՍՏՈՒՅԻՉ

Այն աշակերտները, ովքեր սովորել են Քոլատակի միջնակարգ դպրոցում, լավ գիտեն, որ մարտի 4-ը վաստակաշատ Ֆլորա Բարսեղյանի ծննդյան օրն է:

Արդեն քանի տարի է՝ թռչակի է անցել, բայց այդ օրը թե՛ դպրոցի աշակերտները, թե՛ բուհում սովորող ուսանողները, որոնց դասավանդել է Ֆլորա Բարսեղյանը և թե՛ արդեն պապիկ-տատիկ դարձած նրա աշակերտները կզանգեն, կշնորհավորեն ընկեր Բարսեղյանին: Մի՞թե դա երջանկություն չէ:

Ես նույնպես եղել եմ մեծ ուսուցչի աշակերտը, և երկար տարիներ միասին աշխատել ենք Քոլատակի միջնակարգ դպրոցում: Ուսուցման նրա եռանդն անսպառ էր, խստությունն ու կարգապահությունը նրա եռանդն էին:

Ամեն ուսումնական տարի միջանցքների, դասարանների պատի թերթերը նորացվում ու նորացվում են, բայց դեռ յուրաքանչյուր անկյունից նրա յուրահատուկ ձեռագիրը հիշեցնում է մեծ ուսուցչի մասին: Խոսքերով չեմ կարող ներկայացնել ընկեր Բարսեղյանին. ուղղակի պետք է լինել նրա աշակերտը կամ գործընկերը:

Հարգարժան ընկեր Բարսեղյան, շնորհավոր Ձեր ծնունդը: Ձեզ երկար տարիների առողջ կյանք եմ ցանկանում:

Միշտ Ձեր աշակերտ՝ Սուսաննա ԱՐԱՍՅԱՆ, Քոլատակի միջն. դպրոցի աշխարհագրության և երաժշտության ուսուցչուհի

ՄԱՅՐԵՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ԴԱՍ

Մանկավարժությունը յուրահատուկ արվեստ է, որտեղ ծնվում են հույզերի ու արժանիքների հաճելի ակնթարթներ, որտեղ վեր են հանվում մարդկային կարևորագույն արժեքները՝ սերունդներին փոխանցելով սեր առ հայրենիք և վեհ գաղափարներ: Մանկավարժներին հատուկ է խորաթափանցությունն ու արվեստասիրությունը:

Հիմա անկարող եմ չգրելու մի մանկավարժի մասին, ով իր նվիրումով պիտի օրինակ ծառայի սկսնակ մանկավարժներին, ով դաստիարակում է հայրենիքի արժանի սերունդ, ում շուրթերից միշտ կարելի է երախտագիտության խոսքեր լսել հայրենիքի նվիրյալների մասին:

Տողերիս հերոսուհին՝ Իրինա Ասրյանը, իր գործին նվիրված մանկավարժը, աշխատում է որպես դասավար Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցում:

Նրա վարած դասերը միշտ էլ առանձնացել են իրենց յուրահատկությամբ, բայց որոշեցի այս մեկն առանձնացնել, քանզի թե՛ ման հայրենասիրություն էր, դասը՝ ներկաների համար ուսուցողական:

Այս օրերին, երբ ԱՀ-ի բոլոր դպրոցներում փառաբանվում է ոսկեդեմիկ հայերենը, մայրենիին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպվեց քաղաքային ընդօրինակման դաս 3-րդ դասարանում (դասավար՝ Իրինա Ասրյան): Ներկա էին դասավարներ Ստեփանակերտ քաղաքի բոլոր դպրոցներից: Դասի թե՛ ման «Հովի. Թունանյանի «Սասունցի Դավիթ»-ն էր, դասի տիպը՝ համակցված:



Ուսուցչուհու մտահոգումներից մեկն էր աշակերտների մոտ արձատարել սեր ու հարգանք հայրենիքի, ազգային արժեքների նկատմամբ:

Մտավոր գործի մեթոդով աշակերտները պատասխանեցին թե՛ մատիկ հարցերին: Կարևոր է այն փաստը, որ փոքրիկները հարցերին պատասխանում էին սահուն ու հս-

տակ: Համարված էր բանավոր ու գրավոր խոսքը: Երրորդիցները հպարտությամբ էին բնութագրում Դավիթին՝ արդիականացնելով նրա սխարանները:

Սա է ամենաառողունելին, որովհետև, ըստ իս, դպրոցական նստարանից է սկսվում հայրենասիրությունը:

Ուսուցչուհու խոսքում հուզմունք կար, և աշակերտներն ու հյուրերը հիացմունքով էին ունկնդրում նրա ոգեշունչ բառերը Սասունի մասին, որն ամփոփվեց հետևյալ բառերով.

«Աղեղնավոր Հայկ, Սասունցի Դավիթ, նվիրյալ Մոնթե, հերոս Աբաջյան... Ահա մեր հերոսները, ճանաչե՛ք մեր հերոսներին, հիշե՛ք, մեծարե՛ք ու գլուխ խոնարհե՛ք նրանց վեհության առաջ, որպեսզի Արցախը ավերակ Սասուն չդառնա»:

Դասը կայացած էր, ներկաները՝ հիացած, իսկ աշակերտներն իրենց տեսնում էին քաջ Դավիթի կերպարում և Քուրկիկ Ջալալին հեծած, երազային թևերով սլանում էին երևակայական թշնամու դեմ:


Մ. ԳՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Ստեփ. հ.12 հիմն. դպրոցի հայոց լեզվի և գրակ. ուսուցչուհի

ԳԻՏԱՐԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ


ՌՅՈՒՅԻ ԵՌԱՆԿՅՈՒՆ

Ռյուժի (կամ Ռեյժի) եռանկյունը իրենից ներկայացնում է երեք այնպիսի հավասար շրջանների հատում, որոնց կենտրոնները հավասարակողմ եռանկյան գագաթներ են, իսկ շառավիղները հավասար են այդ կանոնավոր եռանկյան կողմին: Ոչ ողորկ փակ կորը, որը սահմանափակում է այդ պատկերը, կոչվում է Ռյուժի եռանկյուն (նկ.1):

Շրջանից հետո Ռյուժի եռանկյունն ամենապարզ հաստատուն լայնության պատկերն է: Այսինքն էթե Ռյուժի եռանկյանը տանենք երկու զուգահեռ հենակետային ուղիղներ, ապա անկախ ընտրված ուղղությունից նրանց միջև հեռավորությունն անփոփոխ կմնա: Այդ հեռավորությունը կոչվում է Ռյուժի եռանկյան լայնություն (նկ.2):



Նկ.1




Նկ.2

Այլ հաստատուն լայնության պատկերների շարքում Ռյուժի եռանկյունն առանձնանում է մի շարք էքստրեմալ հատկություններով՝ նվազագույն մակերեսով, գագաթի հնարավոր նվազագույն անկյունով, կենտրոնի նկատմամբ նվազագույն համաչափությամբ: Եռանկյունը տեխնիկայում մեծ տարածում է ստացել: Նրա հիմքով են պատրաստվել ճանկավոր ու գրեյֆերավոր մեխանիզմները, Վանկելի ռոտորա-մխոցային շարժիչները, անգամ շաղափիչները, որոնք հնարավորություն են տալիս քառակուսաձև անցքեր ծակել:

Պատկերի անվանումն առաջացել է գերմանացի մեխանիկ Ֆրանց Ռյուժիի ազգանունից: Նա, հավանաբար, առաջինն էր, որը ուսումնասիրեց այս եռանկյան բնութագրիչ հատկությունները և դրանք օգտագործեց իր մեխանիզմներում:

Պատմություն: Ռյուժն այս պատկերի առաջին հայտնագործողը չէր, չնայած նա մանրամասնորեն ուսումնասիրել է այն: Մասնավորապես, նա հետազոտել է այն հարցը, թե քանի կոնտակտ է (կինեմատիկական զույգերով) անհրաժեշտ հարթ պատկերի շարժումը կանխելու համար, և քառակուսուն ներգծված կորացած եռանկյան օրինակով ցույց է տվել, որ անգամ երեք կոնտակտը կարող է բավական չլինել պատկերի շարժումը կանխելու համար:

Որոշ մաթեմատիկոսներ կարծում են, որ շրջանագծի հավասար աղեղներով կառուցված եռանկյունն առաջին անգամ կիրառել է Լեոնարդո Էյլերը՝ 18-րդ դարում: Սակայն նման պատկեր հանդիպում է նաև առավել վաղ շրջանի՝ 15-րդ դարի ձեռագրերում. այդպիսի եռանկյուններ գծագրել է նաև Լեոնարդո դա Վինչին: Ռյուժի եռանկյունը կա նրա A և B հին ձեռագրերում, որոնք պահպանվում են Ֆրանսիայի Բնաստիտուտում, ինչպես նաև Մադրիդյան կոլեկցիայում: Մոտավորապես 1514 թվականին Լեոնարդո դա Վինչին ստեղծում է որպես այդպիսին առաջին աշխարհի քարտեզներից մեկը: Երկրագնդի մակերևույթն այդ քարտեզում հասարակածով և երկու այլ միջօրեականներով (այդ միջօրեականների հարթությունների միջև անկյունը հավասար է 90°) բաժանված է ութ սֆերիկ եռանկյունների, որոնք քարտեզի հարթությունում պատկերված էին Ռյուժի եռանկյունների ձևով, որոնք յուրաքանչյուր բևեռի մոտ չորսական հավաքված են (նկ.3):



Նկ.3

Ավելի վաղ՝ 13-րդ դարում, Բրյուգգեի Աստվածամոր տաճարի կառուցողները որոշ պատուհաններ կառուցել են հենց Ռյուժի եռանկյան ձևով:


Հատկությունները: Ռյուժի եռանկյունը իրենից ներկայացնում է հարթ ուռուցիկ երկրաչափական պատկեր (նկ.4):

Հիմնական երկրաչափական բնութագրիչները

Եթե Ռյուժի եռանկյան լայնությունը նշանակենք a , ապա նրա մակերեսը հավասար կլինի $S = \frac{1}{2}(\pi - \sqrt{3})a^2$, պարագիծը՝ $p = \pi a$, ներգծյալ շրջանագծի շառավիղը՝ $r = \left(1 - \frac{1}{\sqrt{3}}\right)a$,

արտագծած շրջանագծի շառավիղը՝ $R = \frac{a}{\sqrt{3}}$ (նկ.4): Որպեսզի գտնենք Ռյուժի եռանկյան մակերեսը,

անհրաժեշտ է գումարել ներքին հավասարակողմ եռանկյան մակերեսը՝ $S_{\Delta} = \frac{\sqrt{3}}{4}a^2$, 60° անկյան վրա հենված երեք մնացած նույնատիպ շրջանագծային սեգմենտների գումարային մակերեսին՝ $S_{սեգ} = \left(\frac{\pi}{6} - \frac{\sqrt{3}}{4}\right)a^2$: Բսկ Ռյուժի եռանկյան մակերեսի համար կստանանք հետևյալ արժեքը՝ $S_{\Omega,ռ} = S_{\Delta} + 3 S_{սեգ} = \frac{1}{2}(\pi - \sqrt{3})a^2 \approx 0,705a^2$:



Նկ.4

Համաչափություն

Ռյուժի եռանկյունն ունի առանցքային համաչափություն: Այն ունի երկրորդ կարգի երեք համաչափության առանցքեր, որոնցից յուրաքանչյուրն անցնում է եռանկյան որևէ գագաթով և հանդիպակաց աղեղի միջնակետով: Բացի այդ Ռյուժի եռանկյունն ունի երրորդ կարգի ևս մեկ համաչափության առանցք, որն ուղղահայաց է եռանկյան հարթությանը և անցնում է նրա կենտրոնով: Այսպիսով, Ռյուժի եռանկյան համաչափության խումբը բաղկացած է վեց արտապատկերումներից (ներառյալ նույնականները) և համընկնում է հավասարակողմ եռանկյան D_3 խմբի համաչափության հետ:

Կառուցումը կարկինով

Ռյուժի եռանկյուն կարելի է կառուցել օգտվելով միայն կարկինից (կարելի է նույնիսկ քանոն չօգտագործել): Որպեսզի կառուցենք Ռյուժի եռանկյունը, պետք է հետևենք շրջանագծերը գծելու հետևյալ երեք կանոններին: Առաջին շրջանագծի կենտրոնը ընտրում ենք կամայական ձևով, երկրորդ շրջանագծի կենտրոնը պետք է գտնվի առաջին շրջանագծի վրա, իսկ երրորդ շրջանագծի կենտրոնը պետք է լինի նախորդ երկու շրջանագծերի երկու հատման կետերից որևէ մեկը:

Հատկություններ, որոնք ընդհանուր են հավասար լայնություն ունեցող պատկերների համար

Քանի որ Ռյուժի եռանկյան լայնությունը հաստատուն է, ապա այն օժտված է այդ դասին պատկանող բոլոր պատկերների հատկություններով: Մասնավորապես՝

- a լայնություն ունեցող Ռյուժի եռանկյան երկու կամայական կետերի միջև հեռավորությունը չի կարող գերազանցել $a - u$,
- այն շրջանագծի շառավիղը, որը Ռյուժի եռանկյան հետ ունի ամենափոքր երեք ընդհանուր կետ, չի գերազանցում եռանկյան լայնությունը,
- ըստ Հանֆրիդ Լենցի թեորեմի՝ Ռյուժի եռանկյունը չի կարելի բաժանել այնպիսի երկու հավասար պատկերների, որոնց տարամագծի փոքր կլինի եռանկյան լայնությունից,
- Ռյուժի եռանկյանը կարելի է ներգծել քառակուսի, ինչպես նաև կանոնավոր վեցանկյուն,
- ըստ Բարբեի թեորեմի՝ Ռյուժի եռանկյան պարագծի բանաձևը գործում է այլ նույն լայնություն ունեցող պատկերների համար:


Էքստրեմալ հատկություններ

Նվազագույն մակերես

a հաստատուն լայնություն ունեցող պատկերներից նվազագույն մակերեսն ունի Ռյուժի եռանկյունը: Այս պնդումը կրում է Բլաշկե-Լեբեգի թեորեմ անվանումը: Թեորեմն անվանվել է գերմանացի մաթեմատիկոս Վիլհելմ Յոհան Բլաշկեի (տպագրել է այս թեորեմը 1915 թվականին) և ֆրանսիացի մաթեմատիկոս Հենրի Լեբեգի (սահմանել է այս թեորեմը 1914 թվականին) պատվին: Տարբեր ժամանակաշրջաններում այս թեորեմը փորձել են ապացուցել Մացուսաբուրո Ֆուձիվարան (1927 և 1931 թվականներ), Անթոն Մեյերը (1935 թվական), Հարոլդ Էգլստոնը (1952 թվական), Աբրամ Բեզինովիչը (1963 թվական), Դոնալդ Չակերիանը (1966 թվական), Էվանս Հարելը (2002 թվական) և այլ մաթեմատիկոսներ:

Գլորում քառակուսիով

Ռյուժի եռանկյանը կարելի է արտագծել քառակուսի, որի մեջ այն կգտնվի՝ անընդհատ շոշափելով բոլոր չորս կողմերը: Գլորման ընթացքում եռանկյան յուրաքանչյուր գագաթ «անցնում է» քառակուսու պարագծին մոտ «ճանապարհ»: Շեղումը հիմնականում գրանցվում է քառակուսու անկյուններում, որտեղ եռանկյան գագաթը գծում է Էլիպսի աղեղ (նկ.5): Այդ Էլիպսի կենտրոնը գտնվում է քառակուսու հանդիպակաց անկյունում, իսկ նրա մեծ և փոքր առանցքները քառակուսու կողմերի նկատմամբ թեքված են 45° անկյան տակ և հավասար են՝ $a(\sqrt{3} \pm 1)$, որտեղ a -ն՝ եռանկյան լայնությունն է: Չորս Էլիպսներից յուրաքանչյուրը շոշափում է քառակուսու երկու կից կողմերը քառակուսու անկյունից $a\left(1 - \frac{\sqrt{3}}{2}\right)$ հեռավորության վրա:



Նկ.5

Այն պատկերի մակերեսը, որն առաջանում է Ռյուժի եռանկյունը քառակուսու մեջ գլորվելուց հետո, տարբերվում է քառակուսու մակերեսից $\approx 1, 2\%$ -ով, այդ իսկ պատճառով Ռյուժի եռանկյան մոդելով ստեղծում են շաղափիչներ, որոնցից հնարավոր է ստանալ համարյա քառակուսի անցքեր:

Կիրառությունը

Քառակուսաձև անցքերի բացումը

Ֆրեզերը, որոնցում կիրառված է կտրող սուր ծայրերով Ռյուժի եռանկյուն, հնարավորություն են տալիս ստանալ քառակուսաձև անցքեր: Նմանատիպ անցքերը տվորական քառակուսուց տարբերվում են փոքր-ինչ կտրացած գագաթներով: Այսպիսի ֆրեզերի մյուս յուրահատկությունն այն է, որ նրանց կենտրոնը պատվելիս անշարժ չի մնում, ինչպես առօրյայում կիրառվող պարուրաձև շաղափների դեպքում: Այս դեպքում կենտրոնը գծում է կոր, որը կազմված է չորս Էլիպսային աղեղներից: Այդ իսկ պատճառով պատրոնը, որին ամրացված է ֆրեզը, չպետք է խոչընդոտի այդ շարժմանը:

ԸՆԹԱՅԸ

Առաջին անգամ նման կառուցվածք ստացավ ԱՄՆ-ում աշխատող անգլիացի ինժեներ Գարի Ուատսը: Անցք բացելու համար նա օգտագործում էր քառակուսաձև կտրվածքով ուղղիչ շաբլոնը, որում շարժվում էր շաղափը, որում տեղադրված էր «լողացող պատրոն»:

Ռոյտլի եռանկյունը արվեստում: Ճարտարապետություն: Նրա երկու աղեղներից կազմված կոնստրուկցիաները կազմում են բնորոշ պարավոր կամար, սակայն այն գոթական կառույցներում հանդիպում է բավականին հազվադեպ: Ռոյտլի եռանկյան ձևի պատմական կարելի տեսնել Բրյուզելի Մուսթր Աստվածամոր տաճարում, ինչպես նաև շոտլանդական Ադելաիդա տաճարում (նկ.6):



Նկ.6

Նկ.7

Ռոյտլի եռանկյունը օգտագործվում է նաև գոթական ոճին չպատկանող ճարտարապետությունում: Այսպես, 2006թ. Քյոլնում կառուցված 103 մետրանոց «Քյոլնի եռանկյուն» անունը կրող աշտարակը իր կտրվածքում ունի հենց այդ տեսքը (նկ.7):

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ֆիզմաթ. գիտ. դոկտ., պրոֆ.
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

Խոսք հիշատակի



ԷԼԼԱ ԿԱՐՈՅԻ ԴԱՎԹՅԱՆ

Յոթնամյա գյուղում, 1915թ. Ցեղասպանությունից մի կերպ փրկված ու որբացած Կարոյի և Սալաթ Դավթյանների ընտանիքում: Սովորել և ավարտել է Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցը: Այն ավարտելուց հետո որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի աշխատանքի է անցել սկզբում Ասկերանի շրջանի Փրջամալի 8-ամյա, այնուհետև Նախիջևանի և Խրամորթի միջնակարգ դպրոցներում: Աշխատանքին զուգընթաց հեռակա կարգով ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտը՝ ռուսաց լեզու և գրականություն մասնագիտությամբ: 1958թ. ամուսնացել է, 1960թ. ընտանիքով տեղափոխվել Ստեփանակերտ և աշխատանքի ընդունվել հ. 2 միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի, որտեղ աշխատել է շուրջ 25 տարի: Նա ռուսաց լեզվի բարձրորակ մասնագետ էր: Արժանացել է ուսուցիչ-մեթոդիստի կոչման, եղել է Ստեփանակերտի մեթոդիստ ռուսաց լեզվի արտահաստիքային մեթոդիստ, օգնել է երիտասարդ ու սկսնակ ուսուցիչներին, նպաստել նրանց ստեղծագործական աճին: Նա բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով, սոցիոլոգիայի հաղորդի կրթանշանով: Ստեփանակերտի հ. 2 միջնակարգ դպրոցում նրա ջանքերով ստեղծված ռուսաց լեզվի լինգվաֆոնային համակարգով, ուսուցման տեխնիկական միջոցներով, ուսումնադիտողական

պարագաներով կահավորված կարիները լավագույնն է ճանաչվել նախկին ԼՂ Ինքնավար Մարզի դպրոցներում: Էլլա Դավթյանի ուսանելի մանկավարժական փորձն ընդանրացվել է ԼՂ մարզո՞ղկրթա՞մսի ռուսաց լեզվի տեսուչ Զավեն Բաբայանի «Լեռնային Ղարաբաղի մանկավարժական աշխատանքի վարպետները» գրքում (Ստեփանակերտ, 1970թ.), ինչպես նաև ԽՍՀՄ մանկավարժական ակադեմիայի «Русский язык в национальнoй школе» ամսագրի 1980թ. N 4, 5-ում: 1980թ. Էլլա Դավթյանը ռուսաց լեզվի դասավանդման ստեղծագործական իր փորձի մասին հաշվետվությամբ հանդես է եկել ԽՍՀՄ լուսավորության նախարարության ազգային դպրոցների կոլեգիայում, որի արդյունքում արժանացել է ԽՍՀՄ լուսավորության միջխտրության և լուսավորության աշխատողների արհմիությունների համամիութենական կենտրոնական կոմիտեի սահմանած Ն.Կ. Կրուպսկայայի մրցանակին և դրամական պարգևի՝ մատաղ սերնդի ու երիտասարդության դաստիարակության ու կրթության գործում ունեցած բացառիկ հաջողությունների համար:

Էլլա Դավթյանի մանկավարժական աշխատանքը բարձր է գնահատվել. 2006թ. ԼՂՀ անախագահի N73 հրամանագրով նա պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Էլլա Դավթյանը ակտիվ հասարակական-քաղաքական աշխատող էր, բազմիցս ընտրվել է հ.2 միջնակարգ դպրոցի արհմիության կոմիտեի նախագահ, սկզբնական կազմակերպության քարտուղար, կոմունիստական կուսակցության շարքերն է ընդունվել 1970թ. և մինչև կյանքի վերջը հավատարիմ մնացել կոմունիստական գաղափարներին:

Վշտակցություն և զորակցություն ենք հայտնում Էլլա Դավթյանի ամուսնուն՝ վաստակաշատ մանկավարժ Անուշավան Պողոսյանին, նրա ընտանիքի անդամներին:

ԼՂ կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Է. Դավթյանին ճանաչողներ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ-ՄՐՅՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՅԱԽՅԱՆ ՇԱՐժՄԱՆ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ

Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի փետրվարի 20-ին Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցում կազմակերպեց շրջանային ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ նվիրված Արցախյան ազատագրական շարժման 32-րդ տարեդարձին:



Ընդհանուր արդյունքներով հաղթող ճանաչվեց Բերդաշենի դպրոցի «Քաջագուն» թիմը և պարգևատրվեց շրջվարչակազմի պատվոգրով ու գավաթով: Մրցանակային երկրորդ և երրորդ տեղեր գրավեցին համապատասխանաբար Մարտունու հ.1 դպրոցի «Մոնթեպերդո» և ճարտարի հ. 1 դպրոցի «Զարմ Յայկա» թիմերը՝ պարգևատրվելով շրջվարչակազմի պատվոգրերով ու արժեքավոր նվերներով: Վերաբնակեցված Ջիվանի համայնքի դպրոցի «Ակունք» թիմն ակտիվ մասնակցության համար արժանացավ շրջվարչակազմի պատվոգրին: Մրցանակները թիմերին հանձնեց մրցույթային հանձնաժողովի նախագահ՝ շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Վաղին Դանիելյանը:

Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Կ. Գևորգյանը շնորհավորեց ներկաներին Արցախյան ազատագրական շարժման հերթական տարեդարձի կապակցությամբ՝ ներկայացնելով արցախահայության անցած անգնահատելի ու փառավոր ուղին: Շնորհավորեց թիմերին, շնորհակալություն հայտնեց նրանց մասնակցության համար, առավել ևս՝ մրցանակակիրներին, մաղթեց նորանոր հաղթանակներ:

Խաղ-մրցույթին մասնակցում էին Մարտունու հ.1 դպրոցի «Մոնթեպերդո», ճարտարի հ. 1 դպրոցի «Զարմ Յայկա», Բերդաշենի դպրոցի «Քաջագուն», Գիշու դպրոցի «Ոսկե խաչ», Խնուշինակի դպրոցի «Յայրուկ», Կոլխոզաշենի դպրոցի «Շանթ», Նորշենի դպրոցի «Յայրողիներ», Սոսի դպրոցի «Ամարաս», Քերթի դպրոցի «Սիրիուս», ճարտարի հ. 5 դպրոցի «Զորավան», Ջիվանու դպրոցի «Ակունք», Զերիերի դպրոցի «Տիգրան Մեծ» թիմերը:

Խաղ-մրցույթը բաղկացած էր երեք փուլից: Յուրաքանչյուր փուլում թիմերին առաջադրվեցին 10-ական հարցեր՝ մեկական միավորներով: Յուրաքանչյուր հարցի պատասխանի համար թիմերին տրվեց մեկ ռոպե ժամանակ: Արդյունքում հաղթող ճանաչվեց առավելագույն միավորներ հավաքած թիմը:

Խաղ-մրցույթի կարևորությունը, կանոնակարգը ներկայացրին և այն վարեցին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետներ Կարինե Գևորգյանը և Աննա Ավանեսյանը:



Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԶԻԿԻ ԱՌԱՋՆԵԹԱՅԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ



Փետրվարի 15-ին Արցախի վինգզունի եւ թայչիի ֆեդերացիայի վեց մարզիկ, հաջողությամբ հանձնելով վինգզունի որակավորման քննությունը, ստացան համապատասխան կարգի վկայականներ: Ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ Սալաթ Բաղդասարյանը ներկայացրեց վկայականներ ստացած մարզիկների տվյալները եւ պարգևատրեց քննության նշանակությունը մարզիկի կյանքում:

Վինգզունի մարզիկներ Արամե Պետրոսյանը (9տ.), Դմիտրի Առաքելյանը (10տ.), Ռաֆայել Բաղդասարյանը (8տ.), Յուրի Առուշանյանը (16տ.), Էդուարդ Ստեփանյանը (16տ.) ստացան առաջին կարգի վկայականներ, իսկ Արմեն Սուքիասյանը (18+) ստացավ երրորդ կարգի վկայական:

Արցախի վինգզունի եւ թայչիի ֆեդերացիան համագործակցում է ՀՀ վինգզունի ֆեդերացիայի հետ եւ առաջնորդվում քննության համար սահմանված ընդհանուր ծրագրով, ըստ որի վինգզունի մարզիկը պետք է հանձնի վեց կարգի քննություն, որից հետո գալիս են վարպետության աստիճանները: Ս. Բաղդասարյանի խոսքով՝ քննությունը նախ եւ առաջ որոշում է մարզիկի գիտելիքների եւ մարզվածության աստիճանը: Բացի դրանից, քննությունը մարզիկին ոգեշնչում է ավելի լավ պատրաստվել: Այն մարզիկին դարձնում է ավելի պատասխանատու եւ օգնում է գիտակցել ընտրած մարզածեփ լրջությունը: Ըստ կարգերի որոշվում է նաեւ, թե մարզիկը կարող է մարզությամբ զբաղվել: Վինգզունում լավ պարապած լինել՝ նշանակում է կարողանալ սովորածը փոխանցել: Մարզիկը մարզիչ՝ ուսուցչի կոչում ստանալու համար պետք է նախ աշակերտ լինի եւ անցնի համապատասխան դասարաններով:

Մարզիչը ներկայացրեց, որ վինգզուն մարտարվեստն ի սկզբանե ստեղծված է եղել էլիտար դասի մարդկանց համար: Այդ պատճառով ներկայումս էլ վինգզունը համախմբում է հիմնականում ինտելեկտուալ բարձր հատկանիշներ ունեցող մարդկանց: Վինգզուն պարապող մարզիկի մոտ զարգանում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կորդինացիան, արագ ռեակցիան, արագ կողմնորոշվելու ընդունակությունը, զգոնությունը եւ ինարկե, ուժեղ ոգին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՍՓՅՈՒՌԱԿԱՅ ԿՐԹՁԱԽՆԵՐ ՄԵԼՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ (ՄԿՀ)

Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում գտնվող Մելոնյան կրթական հաստատությունը հիմնադրվել է 1926թ. եգիպտահայ բարերարներ Կարապետ և Գրիգոր Մելոնյանների կողմից: Եղբայրները, մտահոգ լինելով Ցեղասպանության հետևանքով աստանդական դարձած իրենց ազգի ճակատագրով, շուրջ 20 հա հողատարածք գնեցին ու հայ մանուկների համար կառուցեցին որբանոց: Որբերը, նավերով հասնելով փրկարար Կիպրոսի ափեր, ի հիշատակ իրենց ծնողների, որբանոցի շուրջ տնկեցին ծառեր, որոնք այսօր էլ դեռ անսասան ու կանգուն են: Եվ երբ մեծացան, ավելի նպատակահարմար դարձավ որբանոցը վերածել կրթական հաստատության: «Կարողեք բացելով ես կլուծեմ իմ ազգի վրեժը. թուրքերը փորձեցին վերացնել մեզ, բայց այս որբերը պիտի շարունակեն վերակառուցել մեր հայրենիքն ու դառնալ մեր նոր առաջնորդները»։ այս խոսքերը 1926թ. ասել է Կարապետ աղան «Մելոնյանը» հիմնադրելիս: Կ. Մելոնյանը եղբոր մահից հետո ամբողջ դպրոցը կտակով նվիրաբերեց Պողոս Նուբար փառալույսի ղեկավարած Հայկական բարեգործական ընդհանուր միությանը (ՀԲԸՄ): Եվ իսկապես, Կարապետ Մելոնյանը մարգարեացավ. իր հիմնադրած դպրոցը տվեց այնպիսի մտավորականներ, որոնք մի քանի սերունդների հայ կրթեցին հայկական սփյուռքի բոլոր օջախներում՝ նրանց մեջ վառ պահելով հայ ոգին: Երբ 1974թ. Թուրքիան օկուպացրեց Կիպրոսի 38%-ը, ամենա կերպով սկսեց ռմբակահարել «Մելոնյան» վարժարանը. այդ, թուրքերի համար ցանկալի չէր օտար հողում տեսնել կայացած ու հզոր հայկական կառույց:

2004թ. ՀԲԸՄ ղեկավարության որոշմամբ Մելոնյան վարժարանը փակվեց, նպատակադրված էր նաև դպրոցի և նրա տարածքի օտարումը:

Կիպրոսի Հանրապետության խորհրդարանը դպրոցի փակման որոշումից 8 օր անց՝ 2004թ. մարտի 24-ին, միաձայն որոշում է կայացնում ընդդեմ վարժարանի փակման, քաղաքաշինության նախարարությունը կրթահամալիրի երկու պատմական շենքերը գրանցում է որպես «պատմաճարտարապետական, ազգային ժառանգություն», հարակից պուրակը՝ «կանաչ գոտի», իսկ 2007թ. մարտին նույն նախարարությունն արձակում է հրաման, որով արգելում է Մելոնյանի կալվածքի որևիցե ձևափոխում:


Սփյուռքի պահանջը մեկն է. բոլոր համայնքներում գործող հայկական դպրոցները պիտի շարունակեն գործել, իսկ փակ դպրոցները պիտի վերաբացվեն, քանի որ ավելի մեծ առաքելություն, քան հայ ինքնության պահպանումն է, չկա, և որևէ այլ կառույց, քան հայկական դպրոցն է, դա անել չի կարող:

Մելոնյան կրթական հաստատությունը զբաղեցնում է 125 հազ. քառ.մ տարածք, որտեղ տեղակայված են 2 եռահարկ ուսումնական մասնաշենքեր, 2 հանրակացարան՝ տղաների ու աղջիկների համար, մարզահամալիր, տարբեր մարզադաշտեր, պաշտոնյաների բնակելի շենք և այլն: Այն միակ գիշերօթիկ, երկրորդական, ամենօրյա դպրոցն էր Սփյուռքում: Նաև միակ միջազգային դպրոցն էր, որտեղ տարբեր լուսանում էին 30-ից ավելի երկրների շուրջ 320 հայ երեխաներ: Ուսումնական ծրագրերն էին՝ հունամիտար, գիտական ու ուստեսական (բիզնես): Հայերենից ու անգլերենից բացի դասավանդվել են հունարեն, ֆրանսերեն, արաբերեն, ռուսերեն, բուլղարերեն: Իր գոյության ընթացքում հաստատությունը տվել է 1650 շրջանավարտ, այստեղ էին կրթություն ստացել Սփյուռքի բազմաթիվ ապագա մտավորականներ, կյանքի ուղեգիր են ստացել տարբեր բնագավառների բարձրակարգ շատ մասնագետներ:

«Ազգ» թերթը տպագրել էր Մելոնյան կրթական հաստատության նախկին տնօրենուհի Ազապի Նասիպեան-Էքմեքեանի «Մտորումներ Մելոնյան բարերարներու օրուան առիթով» հոդվածը, որում գրում է. «Այն, ինչ տեսա, երբեք չեմ մոռանա: Տեսա ամրամուր ցանցապատված շենքերը, մեր մեծերի գետնադիր պղծված արձանաքանդակները և... լսեցի լուրջությամբ՝ հայը չկար»:

Սփյուռքահայ նշանավոր գործիչ Հրայր Չեպեճյանը Արցախում ունեցած հանդիպման ժամանակ այդ առնչությամբ ասել է. «Կիպրոսի Մելոնյան կրթական հաստատության գոցվիլը մեծ վնաս էր՝ չընելու համար, որ աղետ էր: Եվ նամանավոր Միջին Արևելեան այս վերջին իրադարձություններն և ի մասնավորի սիրիահայ գաղութի և հայեպահայ գաղութի այս իրադարձություններն են: Խնդիրն ան է, որ Մելոնյանն ինչ փակվիլը Կիպրոսի գաղութի հետ աննչված չէ, գաղութի որոշում չէ: ՀԲԸՄ ընդհանուր ղեկավարությունն է որոշել գոցել: Բարեբախտաբար Կիպրոսի պետությունը ձեռք դրավ և ըսավ՝ կարելի չէ ծախել, որովհետև կալվածքները, շենքերը, ներառյալ ծառերը պատմական ժառանգություն են: Իմ անձնական համոզմունքս է, իմնա մենք պետք ունինք Մելոնյան կրթական հաստատության մը: Զմռանսը Կիպրոսի աշխարհագրական դիրքը. շատ մոտիկ է Միջին Արևելքին, բայց միևնույն ժամանակ Եվրոպա է: Այնպես որ Մելոնյան կրթական հաստատության պետք է պետք լինի Կիպրոսի և ի պաշտպանություն Մելոնյան կրթական հաստատության: Կարծում ենք՝ ընթերցողին հետաքրքիր կլինեն հայրենիքից ու ծնողներից հեռու 13-14 տարեկան պատանու մտորումները, նրա աշխարհընկալումը: Օրագրային գրառումները ներկայացնում ենք նույնությամբ՝ բացառապես առանց խմբագրման:

ՄԿՀ-Ի ՀԻՇՆԱԳՐՈՒՄ ՕՐԵՐԻՑ 1-ԻՆ ՏԱՐԻ. 1998-1999 (I-II դասարան)



վում էին բլուրներ, հարթավայրեր և երբեմն՝ լեռներ: Բնակավայրեր դեռևս չէին երևում:

ԴԵՊՈ ԿԻՊՐՈՍ Սեպտեմբերի 19, շաբաթ

...«Բարի առավոտ, հարգելի ուղևորներ: Այժմ կկատարվի «Երևան-Կիպրոս» չվերթը: Այն կտևի 3,5 ժամ: Հանձնի ճամփորդություն բոլորիդ»,- լսելի եղավ սպասյակի ձայնը:

Այնուհետև լսվեց մի հռնդյուն, և ես պատուհանից տեսա, թե ինչպես ինքնաթիռի խլացուցիչներից կրակ դուրս եկավ: Հռնդյունը հետզհետե բարձրանալով՝ ինքնաթիռը սկսեց շարժվել: Մի պահ մոռացա, որ գտնվում եմ ինքնաթիռի մեջ և կարծեցի, թե մեր տանն եմ, մեր մեքենայի մեջ ու պատրաստվում եմ գյուղ գնալ: Մտածում էի մեր տան մասին և ավստոսում, որ հանդիպեցի գալ Կիպրոս: Բայց արդեն ուշ էր, արդեն գտնվում էի ինքնաթիռի մեջ և ոչինչ չէի կարող անել: Այս էի մտածում, երբ զգացի, որ անջատվում եմ նստարանիցս: Իհարկե, ես միայն կարծեցի, սակայն տեղիցս չշարժվեցի և նստած էի նույն դիրքում: Նայեցի ներքև և ի՞նչ տեսա. ներքևում գտնվում էին լուցկու տուփերի չափ շենքեր, գույնզգույն գրքերի նման դաշտեր, այգիներ: Մարդկանց չէի տեսնում, նրանք շատ փոքր էին անգնե աչքի համար: Իսկ մեքենաները նման էին մրջյունների, որոնք շարք կազմած՝ կեր էին տեղափոխում ծնեմվա պաշարի համար:

Անցավ մոտ կես ժամ: Դեռևս շարունակում էինք թռչել Հայաստանի վրայով: Տները հետզհետե նուստանում էին, մեքենաները չէին երևում: Կամաց-կամաց մոտենում էինք Հայաստանի սահմանին: Ներքև էի նայում շարունակ: Սպասում էի Հայաստանի սահմանին՝ Արաքսին: Հանկարծ աչքիս մի մուգ-կապտավուն բան երևաց: Նայեցի: Աչքերիս առջև բացվեց պատմական Արարատը: Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր արեգակի ներքո: Դեռևս մշուշապատ էր այն:

Առաջին անգամն էի տեսնում այն՝ այդքան պարզ, գեղեցիկ ու վսեմ: Ամեն անգամ, երբ գալիս էի Հայաստան, կամ ընդհանրապես չէի տեսնում այն, կամ տեսնում էի, սակայն շատ աղոտ ձևով: Հայաստանից Արարատը երևում է, բայց կարծես թե մառախուղի մեջ կրած լինի:

Ինքնաթիռը առաջ էր շարժվում, և Արարատը կարծես հեռանում էր: Աչքերս սենեկ էի նրա վրա և չէի թարթում: Հետզհետե Արարատը հետ մնաց և կորավ տեսողաշտիցս: Ես նորից գլուխս ուղղեցի ներքև: Հայաստանից դուրս էինք գտնվում. ներքևում ամբողջովին տարած-

վում էին բլուրներ, հարթավայրեր և երբեմն՝ լեռներ: Բնակավայրեր դեռևս չէին երևում:

գետ է, արդյոք: Մտածեցի, մտածեցի և հիշեցի... Հայաստանի մայր գետն է: Այո, մայր Արաքսը, որը հոսում է Հայաստանի սահմանով: Շարունակ ճանրում էի պարզապես Արաքսին: Բայց, ափսոս, մենք չանցանք նրա վրայով: Ես միայն մշմարեցի այն հեռվում, լեռների մեջ: Թերևս քիչ անձեր տեսած լինեմ այն:

Անցավ մոտ կես ժամ: Հայաստանն արդեն չէր երևում, այն մնաց հեռվում: Ես այլևս ներքև չէի նայում. սրտխառնոց էի գզում: Երևաց սպասյակը (նա միշտ մեզ հետ էր և կատակներ էր անում): Նրա ձեռքին կար ուստեստեղեն. ճաշն անվել էր: Ես ոչինչ չկարողացա ուտել. սրտխառնոցս ավելի էր ուժեղացել: Տապ թույլ եմ, և ես քնեցի ու մտածեցի՝ միգրացի այդ ձևով կարողանամ սրտխառնությունս անցկացնել:

Արթնացա կողքիմիս ձայներից: Սրտխառնությունս անցել էր: Նայեցի ներքև և տեսա... Միջերկրական ծովը, Միջերկրականի արևելյան ափերը՝ Լիբանանը: Ամբողջովին ինձ կորցրած՝ նայում էի ծովին: Կյանքումս առաջին անգամ էի ծով տեսնում՝ այն էլ աշխարհի շատ հայտնի ծովերից մեկը: Ափում փոքր նավեր էին պտտվում, հավանաբար ձկնորսական նավակներ էին: Ավելի առաջ գնալով՝ հանդիպեցիք շոգենավերի, որոնք մեծ արագությամբ ձեռքում էին ծովի կապույտ ու մաքուր, ինչպես նաև աղի ջրերը:

Անընդհատ առաջ էինք ընթանում: Կիպրոսը տակավին չէր երևում: Մեր աջ ու ահյակ կողմերը ջուր էր:

Դեռևս ներքև էի նայում: Ներքևում փոքրիկ սպիտակ բաներ երևացին: Կարծեցի, թե ձկնորսական նավակներ են: Բայց մի պահ մտածեցի.

ինչպե՞ս կարող էին նրանք ափից այդքան հեռանալ: Եվ սկսեցի ավելի ուշադրությամբ զննել: Դրանք ձկների վտառներ էին, որոնք դուրս էին գալիս ջրի երես խաղալու և արևի ճառագայթների ներքո պապրում էին աղամանրների պես: Շուրջս նայեցի. ամենուրեք պապրում էր, ամենուրեք վխտում էին ձկների վտառներ:

Հանկարծ հավեցի նստարանիս: Իջում էինք: Եվ ահա բացվեցին ինքնաթիռի անիվները: Ես աջ ու ձախ նայեցի, բայց ոչ մի ցամաք չտեսա: Մտածեցի՝ չլինի՞ թե տեխնիկական անպատրաստությունների պատճառով մեր ինքնաթիռն ընկնում է: Սիրտս ահ ընկավ: Անհամբեր սպասում էի... Հանկարծ զգացի, որ ինքնաթիռը թեքվում է դեպի աջ: Գլուխս բարձրացրի և տեսա... ցամաք:

Կիպրոսը թևերը լայնորեն բացած՝ ընդունում էր մեզ...

ԿԻՊՐՈՍՈՒՄ (Լառնակա)

Ինքնաթիռի անիվները հասան գետնին, և մենք շարունակ գնում էինք գետնով: Վերջապես ինքնաթիռը կանգնեց:

«Սիրելի ուղևորներ, հասանք Կիպրոս: Խնդրում են հանգիստ, առանց հրմշտոցի իջնելու»,- նորից լսելի եղավ սպասյակի ձայնը:

Հերթով իջանք ինքնաթիռից: Փոթորկահույզ քամին քանդում էր մագերի սանրվածքը, ուզում էր քշել-տանել մեզ:

Մտամբ երկար ավտոբուսի մեջ է շարժվեցինք զգիտեմ որտեղ: Հասանք մի մեծ շինություն և ներս մտանք: Ասեղ գցելու տեղ չկար. հարյուրավոր մարդիկ կային հավաքված:

Մի սեղանի վրա թղթեր կային: Վերցրինք: Պետք է գրեցինք անուն, ազգանուն, հայրանուններս և այլն: Այնուհետև նստած սպասում էինք, մտածում էի մեր իրերի մասին. արդյոք ո՞ր տարան:

Բազմությունը հետզհետե նուստանում էր: Հասավ նաև մեր հերթը: Այդպես էլ չհասկացա, թե ինչ էինք անում: Ցույց տվեցինք մեր անցաթղթերը և անցանք մի մեծ դահլիճի մասն ընդարձակ սենյակ: Այնտեղ էին մեր իրերը: Ես հավաքեցի իմ ճամպուրկները (ասեմ, որ մի ճամպուրկ էր, մյուսը՝ փոքր պայուսակ) և սպասում էի մյուսներին: Պտտվում էի դահլիճում: Տեսա մի փոքրիկ կր-

կնշանակի հայկական իրականությունը ուրիշ մտահոգություններ չունի՞: Մենք այսօր լեզվապահպանումի հարց ունինք, մշակութային հարց ունինք: Ինձի համար ցավ է, որ անոնք, որոնք որոշեցին գոցել, նվազագույնը չըսին՝ եկեք մի հատ գիտաժողով կազմակերպենք և ըսենք, եթե այս դպրոցը հիմա իր նպատակին չի ծառայեր, ի՞նչ տեսակի մտահոգություններ, մարտահրավեր ունի հայկական իրականություն, և դենք սեղանի վրա և տեսնինք, թե այս դպրոցը կրճա՞ օգտակար ըլլալ, թե՞ ոչ: Եթե օգտակար չըլլա, գոցեք, եղբայր, որին չեմ համոզված, որովհետև շատ են մեր սփյուռքին մեջ մարտահրավերները և նաև հայրենի իրականության մեջ մարտահրավերները, որ այս դպրոցը կրճա իր կարևոր դերն ունենալ, մանավանդ Կիպրոսի մեջ պետությունը կօժանդակե ազգային փոքրամասնություններուն»:

Այսօր «Մելոնյան համաշխարհային նախաձեռնությունը» շարժում է սկսել ի պաշտպանություն Մելոնյան կրթական հաստատության:

Մելոնյան վարժարանն ունի նաև արցախցի շրջանավարտներ: 1998թ. Ստեփանակերտի դպրոցներից հինգ աշակերտ՝ երեք տղա և երկու աղջիկ, հատուկ քննությունների արդյունքներով 6-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել են Մելոնյան վարժարան՝ սովորելով ՀԲԸՄ հովանավորությամբ: Մեր ձեռքի տակ է նրանցից Կրույր Գաբրիելյանի հիշատակարանը: Որոշեցինք այն տպագրել ի հիշատակ և ի պաշտպանություն Մելոնյան կրթական հաստատության: Կարծում ենք՝ ընթերցողին հետաքրքիր կլինեն հայրենիքից ու ծնողներից հեռու 13-14 տարեկան պատանու մտորումները, նրա աշխարհընկալումը: Օրագրային գրառումները ներկայացնում ենք նույնությամբ՝ բացառապես առանց խմբագրման:

պակ, մեջը՝ Կիպրոսի մակետը: Մոտեցա նայելու: Մի մարդ կար նստած մեջը: Մի քարտեզ մեկնեց ինձ: Ես վերցրի և հեռացա (հետո իմացա, որ դա տուրիստական քարտեզ է. այն մարդը, կարծելով, թե տուրիստ եմ, քարտեզ տվեց):

Եկան նաև մնացածները: Ծամպուրկները տեղափոխեցինք ավտոբուսի մեջ և շարժվեցինք դեպի մեզ անձամոթ Մելոնյան կրթական հաստատությունը:

Սլանում էինք Կիպրոսի հարթ ու կոկիկ ճանապարհներով: Աչքերս հառել էի պատուհանից դուրս և նայում էի Կիպրոսի բնությանը՝ մեր փառթան ու արևադարձային, մերթ չոր ու տափաստանային:

Դեռևս քաղաք չէինք մտել: Անցնում էինք անմարդաբնակ տեղերով: Անհամբեր սպասում էի, թե երբ կհասնեմ Մելոնյան կրթական հաստատություն: Աչքիցս բաց չէի թողնում ճանապարհի վրա գտնվող ցուցատախտակները, որոնք ցույց էին տալիս մնացյալ ճանապարհը՝ մինչև Նիկոսիա:

Երևացին առաջին տները: Այնուհետև՝ շենքերը, այնուհետև՝ offices-ները:

Մեր լայնարձակ ճամապարհը բաժանվեց երկու մասի: Երկու ճամփաները իրարից բաժանվում էին մեղ ծաղկանոցներով: Ամեն տեսակի բույսեր կային՝ սկսած գաճաճ բույսերից մինչև միջակ ծառերը:

Հասել էինք Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիա: Հանկարծ մեր ավտոբուսը կանգ առավ (թեև միշտ էլ կանգ էր առնում ամեն լուսանցույցի կամ հետիոտնի համար նախատեսված զծեղի դիմաց):

Առջև երևացին երկաթ դարպասներ, որոնք գտնվում էին փակ վիճակում: Կարող էիք նշան տվեց դարպասը բացելու համար:

Ես ոչինչ չհասկացա: Աջ ու ձախ նայեցի՝ եղևնու փոքր անտառներ էին: Նայեցի առաջ՝ դարպասին: Նշմարեցի սպիտակ տա-

ներ: Աչքերս լարեցի և կարողացա կարդալ. «Մելոնյան Կրթական Հաստատություն»:

(շարունակելի)
Կրույր ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

<p>ՀՈՒՍԱՐԱՐ ԽՍՐԱԳԻՐ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ</p>	<p>Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ</p>	<p>Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info</p>	<p>Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:</p>	<p>Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 2.03.2020թ.:</p>
---	---	---	---	--

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: